

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՅՐԱՊԵՏՈՒՆԵՐԻ ԳԵՂԵՍԻՍԻՍԻ

ՄԱՅՐ ԱԹՈՒՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՍՏԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

14 հոկտեմբերի

Ռայմոնդ Պաուլսին եւ Վլադիսլավ Տրետյակին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց լատվիացի հայտնի երգահան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ռայմոնդ Պաուլսին եւ ՌԴ Պետական Դոմայի պատգամավոր, ՌԴ հոկտեմբերյանի Նախագահ Վլադիսլավ Տրետյակին՝ ուղեկցությամբ ՀՀ-ում Լատվիայի պատվո հյուպատոս Արմեն Դասաբոլյանի:

Հանդիպմանը Նորին Սրբությունը հյուրերին ծանոթացրեց Հայ Եկեղեցու կարեւոր առաքելությանն ու դերակատարությանը մեր ժողովրդի կյանքում՝ ընդգծելով, որ քրիստոնեական հավատը զորացրել է հայ ժողովրդի ոչ միայն հոգեւոր, այլեւ ստեղծագործական

կյանքը՝ հանդիսանալով ինքնության պահպանման հիմնական երաշխիքը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը բերեց Ռայմոնդ Պաուլսին եւ Վլադիսլավ Տրետյակին՝ երաժշտության ու սպորտի բնագավառում ունեցած մեծ ավանդի համար:

Իրենց հերթին Վլադիսլավ Տրետյակն ու Ռայմոնդ Պաուլսը երախտագիտություն հայտնեցին հայության հոգեւոր կենտրոնում ջերմ ընդունելության համար, ապա հանդիպման ավարտից հետո այցելեցին Մայր Աթոռ թանգարաններ՝ ծանոթանալով հայ ժողովրդի ազգային-հոգեւոր արժեքներին:

Ռումինիայի Հանրապետության ակադեմիայի Նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 70-ամյակի առիթով Հայաստան ժամանած Ռումինիայի Հանրապետության ակադեմիայի Նախագահ Իոնել Հայդուկին եւ տարբեր երկրների ակադեմիաների ներկայացուցիչների՝ ուղեկցությամբ ՀՀ ԳԱԱ Նախագահ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ Ռադիկ Մարտիրոսյանի:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ տարբեր երկրների ակադեմիաների ու գիտական հաստատությունների միջեւ ձեւավորված համագործակցությանը՝ հույս հայտնելով, որ փորձի փոխանակությունը եւ սերտ գործակցությունը պիտի նպաստեն գիտության առաջընթացին: Խոսելով գիտական հաստատությունների առջեւ ծառացած դժվարությունների ու մարտահրավերների մասին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վստահություն հայտնեց, որ դրանք կհաղթահարվեն գիտնականների կամքի, համատեղ ջանքերի եւ գիտա-



կան հաստատությունների գործունեության վերակազմակերպման շնորհիվ:

Ռումինիայի ակադեմիայի Նախագահ Իոնել Հայդուկը Վեհափառ Հայրապետին շնորհեց Ռումինիայի ակադեմիայի դոկտորի պատվավոր կոչում: Նորին Սրբությանը, փոխանցելով պատվավոր դոկտորի վկայագիրը՝ տիար Հայդուկը մեծագույն պատիվ նկատեց այս արարողությունը Նախագահելը՝ վերհիշելով Նորին Սրբության այցը Ռումինիայի ակադեմիա եւ դասախոսությունը: Այս առիթով Ռումինիայի ակադեմիայի Նախագահին խոսքում ընդգծեց նաեւ, որ կրոնն ու գիտությունն ամբողջապես կարող են համագործակցել:

Վերստին շնորհավորելով հայ ակադեմիկոսներին՝ ՀՀ ԳԱԱ 70-ամյակի առիթով, եւ երախտագիտություն հայտնելով ներկաներին այցի ու պատվավոր կոչման համար՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Տիրոջ օգնականությամբ առավել արգասաբեր դառնա ակադեմիաների միջեւ ձեւավորված համագործակցությունը:

Կ. Պոլսի Ս. Գեորգ եկեղեցու «Սահակյան» դպրաց դասին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ պետական Էրմիտաժի տնօրեն, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Միխայիլ Պիոտրովսկուն:

Նորին Սրբությունն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց տիար Պիոտրովսկուն՝ գոհունակություն հայտնելով Մայր Աթոռ թանգարանների եւ պետական Էրմիտաժի միջեւ ձեւավորված սերտ համագործակցության, Հայ Եկեղեցու պատմական սրբազան արժեքների վերականգնման եւ պահպանման գործում Մայր Աթոռի ցուցաբերվող մեծ աջակցության եւ մասնագիտական խորհրդատվության համար:

Հայ Եկեղեցու եկեղեցական վարագույրների եւ խույրերի ցուցահանդեսի Նախապատրաստական աշխատանքները:

Չրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Մայր Աթոռ Սբ Էջմիածնի կառուցողական աշխատանքները հայ հոգեւոր սրբազան արժեքների հավաքագրման ու պահպանության գործում, ինչպես նաեւ՝ թանգարանային ցուցադրությունների ընդլայնման հեռանկարներին:

Հանդիպումից հետո Գարեգին Բ Վեհափառն ու տիար Պիոտրովսկին այցելեցին «Ռուբեն Սեւակ» Նորաբաց թանգարան, ինչպես նաեւ՝ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարան:



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կ.Պոլսի Ս. Գեորգ հայկական եկեղեցու «Սահակյան» դպրաց դասին՝ ուղեկցությամբ Չակ-բեոս ծ. վրդ. Օհանյանի:

Ողջունելով «Սահակյան» դպրաց դասի այցը

հայրենիք եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքն ու բարեմաղթանքները բերեց դպրաց դասի անդամներին՝ եկեղեցասեր նվիրյալ գործունեության համար: Վե-

հափառ Հայրապետը, կարեւորելով նշանավոր երգչախմբի օգտաշատ ծառայությունը, հորդորեց հայ հոգեւոր եւ ազգային երգերի կատարումներով շարունակել հայապահպան կարեւոր առաքելությունը պոլսահայության կյանքում:

Նորին Սրբությունը դպրաց դասի միջոցով նաեւ հայրապետական իր օրհնությունն ու ջերմ ողջույնները հղեց պոլսահայ համայնքին:

Հանդիպման ընթացքում Կ.Պոլսի Ս. Գեորգ եկեղեցու «Սահակյան» դպրաց դասը հանդես եկավ ազգային-հոգեւոր երգերի կատարումներով:

Նույն օրը երգչախումբը համերգային ելույթ ունեցավ Գեորգյան հոգեւոր ճեմարանում:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ

17 հոկտեմբերի 3-րդ միջազգային մեդիաֆորումի մասնակիցներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց 3-րդ միջազգային մեդիաֆորումի մասնակիցներին՝ ուղեկցությամբ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի, ինչպես նաև՝ Եվրոպայի եւ Ասիայի լրագրողների մեդիակոնգրեսի խորհրդի նախագահ Աշոտ Ջազոյանի։

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց նախա-

ծեռության կազմակերպիչներին՝ վստահություն հայտնելով, որ այն պիտի լավագույնս նպաստի ժողովուրդների միջեւ բարեկամական կապերի զորացմանն ու զարգացմանը։

Տարբեր երկրներից Հայաստան ժամանած անվանի լրագրողներին ներկայացնելով Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ Նրա հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջ-

միածնի պատմությունն ու առաքելությունը՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց այն կարեւոր դերակատարությունը, որ Եկեղեցին ունեցել է հայ ժողովրդի ազգային ինքնության ձեւավորման եւ պահպանման գործում։

Ի պատասխան լրագրողների հարցումների՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկայացրեց Հայ Եկեղեցու ազգագույն ծառայությունը սոցիալական ոլորտում, նաեւ՝ Եկեղեցու խաղաղասիրական ջանքերը՝ ի խնդիր դարաբաշխական հակամարտության խաղաղ կարգավորման։

Զրույցի ընթացքում մասնավոր անդրադարձ կատարվեց Եկեղեցու կրթադաստիարակչական գործունեությանը, Նրա առջեւ ծառացած զանազան մարտահրավերներին եւ երկրի սոցիալ-տնտեսական կյանքին։



«Եկեղեցի եւ պետություն փոխհարաբերություններ. հրամայականներ եւ մարտահրավերներ» թեմայով միջազգային գիտաժողով՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Հոկտեմբերի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իր աշխատանքն էր սկսել «Եկեղեցի եւ պետություն փոխհարաբերություններ. հրամայականներ եւ մարտահրավերներ» թեմայով միջազգային գիտաժողովը։ Գիտաժողովը կազմակերպվել էր Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի նախաձեռնությամբ եւ աջակցությամբ ԵՀԽ հայաստանյան «Կլոր սեղան» բարեգործական միջեկեղեցական հիմնադրամի եւ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան։ Իրենց մասնակցությունն էին բերել Մայր Աթոռի միաբաններ, քույր Եկեղեցիների հոգեւորականներ, ՀՀ պետական կառույցների, ՀՀ եւ Եվրոպական համալսարանների, միջազգային քրիստոնեական եւ հասարակական կազմակերպությունների, Հայաստանի տարբեր կրոնական հարանվանությունների ներկայացուցիչ-

մալով մեր սուրբ հայրերի պատգամներին։

... Այսօր էլ այս գիտաժողովի միջոցով Հայոց Եկեղեցին իր նպաստն է փորձում բերել ոլորտի օրենսդրական բարեփոխումների գործընթացին։

Այս գիտաժողովի ընթացքում դուրս բերվելու էր Եվրոպական տարբեր երկրների փորձը։ Վստահ եմ, որ հարգելով խղճի եւ կրոնական ազատությունների մասին միջազգային սկզբունքները՝ հաշվի կառնեք նաեւ Եվրոպական քաղաքակրթության մաս կազմող մեր երկրի կրոնական ու մշակութային յուրահատկությունները։

Գիտաժողովի հարգարժան մասնակիցներ, մեկ ազամ եւս ողջունելով՝ մաղթում եմ ձեզ հաջողություն եւ արդյունավետ աշխատանք։

Այնուհետեւ ողջունվի խոսքով հանդես եկավ Եվրոպական Եկեղեցի-

18 հոկտեմբերի

Միջազգային գիտաժողովի մասնակիցներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռում անցկացվող «Եկեղեցի եւ պետություն փոխհարաբերություններ. հրամայականներ եւ մարտահրավերներ» թեմայով միջազգային գիտաժողովի մասնակիցներին։

Ամենայն Հայոց Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց գիտաժողովի գումարման առիթով՝ ողջունելով քույր Եկեղեցիների, Եկումենիկ կազմակերպությունների, միջազգային եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը գիտաժողովին եւ իր գնահատանքը հայտնեց գիտաժողովի կազմակերպիչներին։

Վեհափառ Հայրապետը, կարեւորելով գիտաժողովի շրջանակներում քննարկվող նյութը, վստահորեն նշեց, որ այն փորձառության փոխանակմամբ պիտի փոխադարձաբար զորացնի ժողովի մասնակիցներին, նպաստի համագործակցության ամրապնդ-



մանը եւ երկրում ժողովրդավարական կառույցների հզորացմանը։ Ամենայն Հայոց Կաթողիկոսն արդյունավետ ընթացք մաղթեց ժողովի աշխատանքներին, որոնք մեծապես պիտի զորացնեն Եկեղեցիների գործակցությունը՝ հանուն բարոյ, արդար եւ խաղաղ աշխարհի։

Վերջում Վեհափառ Հայրապետը պատասխանեց գիտա-

ժողովի մասնակիցներին հուզող հարցերին։

Հանդիպումից հետո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հին մատենադարանի դահլիճում ժողովականները ներկա գտնվեցին ասեղնագործ-գեղանկարիչ Մարիետա Մարտիրոսյան-Ալեքսանյանի «Հոգու շարական» խորագրով ցուցահանդեսի բացմանը։

22 հոկտեմբերի

Սիրիահայ մանուկների երգչախմբին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց սիրիահայ մանուկների երգչախմբին՝ ուղեկցությամբ «Օգնի՛ր եղբորդ» բարեգործական ծրագրի պատասխանատու Խաչիկ Ջոզիկյանի։

Հանդիպմանը տիար Ջոզիկյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց բարեգործական կազմակերպության ջանքերով իրականացվող հերթական ծրագիրը՝ սիրիահայ

մանուկներից կազմված երգչախմբը, որից հետո փոքրիկները Նորին Սրբության համար կատարեցին Կոմիտասի «Մանկական աղոթքը»։

Այնուհետեւ երգչախմբին իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ նաեւ գնահատանք հայտնելով սիրիահայ մանկանց կրթության ազնիվ գործին իրենց մասնակցությունը բերած մարդկանց։

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ Սիրիայի հայ համայնքի եւ Հայաստանում ապաստան գտած սիրիահայերի վիճակին։ Վեհափառ Հայրապետն ավելի մոտիկից ծանոթացավ Հայաստանում բնակություն հաստատած սիրիահայերի կյանքի պայմաններին ու խնդիրներին՝ վստահեցնելով, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին իր աշխարհասփյուռ թեմերով պիտի շարունակի զորակցել սիրիահայերին եւ դժվարին այս կացության մեջ իր օգտակարությունը բերել նրանց։

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրական խրատներով ոգեւորեց մանուկներին՝ պատգամելով իրենց ազգի արժանավոր գավալները լինել եւ պայքարել, որ ողբերգությունները տեղ չգտնեն մարդկության կյանքում, եւ միայն ուրախությունն ու բերրանքը լինեն իրենց կյանքի ուղեկիցը։



ներ, ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ։

Բացման արարողությանը մասնակիցներին ողջունեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Հովակիմ Եպս Մանուկյանը։ Սրբազան հայրն իր խոսքում կարեւորեց երկօրյա ժողովի անցկացումը Մայր Աթոռում՝ վստահություն հայտնելով, որ քննարկվող նյութերը մեծապես կնպաստեն միջեկեղեցական եւ միջպետական փոխհարաբերությունների առավել արդյունավորմանը։

Իսկ ՀՀ ԱԾ նախագահ Հովիկ Աբրահամյանի ողջունվի խոսքը փոխանցեց ԱԾ փոխնախագահ Հերմինե Նաղդալյանը։ ՀՀ ԱԾ նախագահի ուղերձում մասնավորապես ասված էր. «...Բոլորիս է հայտնի Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցու վեհ առաքելությունը մեր ժողովրդի քրիստոնեական դաստիարակության, հոգեւոր արժեքների սերմանման, ամրապնդման ու ազգապահպանության գործում։ Պատմական այդ առաքելությունը Մայր Եկեղեցին այսօր էլ շարունակում է իրականացնել Հայաստանի եւ աշխարհասփյուռ հայության հանդեպ՝ հավատարիմ

ների կոնֆերանսի գլխավոր քարտուղար դոկտոր Գի Լիագրան՝ ընդգծելով այն բացառիկ դերակատարությունը, որ ունի Հայ Եկեղեցին Եկումենիկ միջեկեղեցական կառույցների՝ մասնավորապես Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի աշխատանքներում։ «Հանդիպումն այստեղ կարելի էր նշանակություն ունի։ Նայելով պատմությանը՝ տեսնում ենք, որ Հայաստանն այն երկրներից է, որ մեծագույն գինն է վճարել մեր ընդհանուր արժեքների պաշտպանության համար, ինչը եղել է մասամբ իր աշխարհաքաղաքական դիրքի պատճառով։ Հետեւաբար Ձեր գոյությունն ապացույց է նրա, որ նվիրյալ քրիստոնեական հասարակությունը կարող է հաղթահարել ցանկացած մարտահրավեր։ Իրեն Եկեղեցիներ՝ մենք պետք է ջանքեր գործադրենք՝ ի պաշտպանություն մարդկային իրավունքների, ժողովրդավարության եւ օրենքի գերակայության։ Մենք հավատում ենք, որ դավանանքի ազատությունը կարելի է բոլոր մարդկանց համար։ Անգամ եթե կրոնի ու խղճի ազատությունը տրվում է բազում միջազգային իրավական մարդու իրավունքների միջոցով, բոլորիս համար դեռ մեծ անելիք կա։ Շարունակությունը՝ էջ 9

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՄԻՄԵՆՈՆ Ա ԵՐԵՎԱՆԴԻ (1763-1780)

Սկիզբը՝ թիվ 7-17, 19


Բեղմնավոր եղավ Միմենոնի գործունեությունը գրեթե բոլոր բնագավառներում՝ ուսման, գիտության, տպագրության, շինարարության, տնտեսության, դիվանագիտության, եւ մասնավորապես նա արդյունավոր եղավ որպես համայն հայության հոգեւոր հովվապետ: Կաթողիկոսը դեռ 68 տարեկանում խիստ հիվանդացավ, եւ բժիշկները նրան խորհուրդ տվեցին Էջմիածնից հեռանալ Արագածի հովասուն ստորոտը: Նա Բյուրական մեկնեց, եւ հազիվ մեկ ամիս անց վրաց Յերակ թագավորը պատերազմի դուրս եկավ Երեւանի Յիուսեյն խանի դեմ՝ մի քանի տարվա հարկը չմոծելու պատճառով: Երբ վրաց բանակը հասել էր Յամգաջիման, Յիուսեյն խանը դիմեց Միմենոնի միջնորդությանը՝ Յերակի հետ հաշտվելու համար: Միմենոն ի վիճակի չէր անգամ անկողնուց վեր կենալու, ուստի տեղապահ Մկրտիչ Շոռոթեցուն եւ աթոռակալ Գալուստ Աշտարակեցուն ուղարկեց Յերակի մոտ: Նրանք երաշխավորեցին Յիուսեյն խանի կողմից վճարումը եւ կարողացան համոզել Յերակին հետ վերադառնալ: Այդ ժամանակ Միմենոն տպագրական մամուլ նվիրեց Յերակին, որով հիմք դրվեց վրացական տպագրությանը: Յիուսեյն խանն իր խոստումը չկատարեց, եւ 1779 թվի գարնանը Յերակը կրկին

նրա դեմ արշավանքի ելավ: Միմենոն այդ ժամանակ օդափոխության էր գնացել Օշական, երբ Յիուսեյնը նորից նրանից օգնություն խնդրեց: Չնայած անառողջ վիճակին՝ Միմենոն ստիպված եղավ գալ Երեւան եւ միջնորդությամբ դիմել Յերակին: Կրաց գործերը հասել էին Աշտարակ, եւ Միմենոն փորձեց կասեցնել Յերակի շարժումը ու նրան խաչի վրա երդվել տալ, որ փողի համար արյուն չի թափի եւ Յայոց աշխարհը չի ավերի: Սակայն Յերակը շատ զայրացած էր եւ Միմենոնի միջնորդությունը չընդունեց: Արարատյան դաշտն ավարառության ենթարկվեց: Յայկական գյուղերը կողոպտվեցին, ու բնակիչները կոտորվեցին, 30-ից ավելի եկեղեցի ավերվեց, մեծ թվով հայ գերիներ տարվեցին, Մայր Աթոռը հարյուր հազարների վնաս կրեց: Միմենոն շատ մարդկանց պատսպարեց վանքի պարիսպների մեջ եւ մեծ գումարներ վճարեց՝ որպես փրկագին: Նրա աչքի առաջ իր ստեղծածը քանդվում էր, նրան ցավ էին պատճառում կողոպտված ու ավերված հայկական գյուղերի բնակիչների խեղճության մասին լուրերը: Ձմեռային վերահաս ցրտերը եւ հմերթի թագավորի՝ Սողոմոնի հեռանալը ստիպեցին Յերակին վերադառնալ Վրաստան, երբ արդեն պարպել էր Երեւանն ու շրջակայքը, եւ երկիրը լրիվ կործանման էր հասցված:

Խուճապ, փախուստ եւ բռնադատված գաղթականություն, որոնք բոլորին եւ առաջին հերթին կաթողիկոսին հուսահատեցրել էին: Միմենոն վշտագին ապրումներով անցկացրեց 1779-1780 թթ. ձմեռը եւ փորձեց ամեն ինչ անել՝ ժողովրդի վիճակը մեղմելու համար: Սակայն նա հիվանդ էր, եւ միջոցներ էլ չկային: Ի վերջո մահացավ՝ 1780 թվականի հուլիսի 26-ին՝ Վարդավառի կիրակի օրը՝ ժամը 4-ին: Մարմինը հողին հանձնվեց Սբ Գայանեի գավթի հարավակողմում: Նա պայծառ հետք թողեց Յայ Եկեղեցու պատմության մեջ իր ողջ գործունեությամբ:

1773 թվի հոկտեմբերի 2-ին մահացավ Սարգիս Սարաֆյանը, որը հանդիպելով քահանաների նոր քննադատությանը՝ որոշել էր հեռանալ Կ. Պոլսից ու 24-օրյա նավարկությունից հետո՝ 1772 թվի հոկտեմբերի 23-ին, հասել էր Մարսել, հետո անցել էր Անթիս, Ջենովա ու Պիզա, դեկտեմբերի 18-ին մտել էր Լիվոռնո, ուր հիվանդացել եւ կնքել էր իր մահկանացուն: Նա ապրեց հեղինակական լուրով ու իր գործունեությամբ ոչնչով չփայլեց:

Արեւմուտքի հրապույրը շատ եկեղեցականների համար առիթ ծառայեց Արեւելքից հեռանալու եւ հանգրվանելու Արեւմուտքում, որտեղ նրանք հեշտ կացություն էին ակնկալում: Մի մասը դեռահասներ էին՝ հռոմեադավան



միաբանություններից կամ վարժարաններից, որոնց Արեւմուտք էր տանում ուսման ծարավը: Սակայն կաթոլիկ հեղինակները շատ ավելի մեծ կարեւորություն էին տալիս այն հանգամանքին, որ Յայ Եկեղեցու որոշ եպիսկոպոսներ, իրենց գործունեության վերջում հաստատվելով Արեւմուտքում, հարկադրված՝ հռոմեադավանություն էին ընդունում: Սա ներկայացվում էր իբրեւ հռոմեադավանության ուղղության ճշմարտացիության փաստ, սակայն որքան տկար պիտի լինեին կաթոլիկությունը, որ իր ուժն ստանալար այսպիսիների կաթոլիկացումից: Նման ողորմելիների փայլուն ներկայացուցիչը Սարգիս Սարաֆյանն էր, որ իր շահերից ելնելով՝ ծառայել է այլեւայլ եկեղեցիների: Սարաֆյանի նման հոգեւորականների շարքում իր արժանավոր տեղն ուներ Յարություն Բասենցի եպիսկոպոսը, սակայն շատերի պես նա էլ ետ եկավ, որովհետեւ 1775 թվի հունվարի 15-ին նրան տեսնում ենք Պրուսայում: Պրուսացիք նրանից երիցս զանգատվում են հայոց կաթողիկոսին, որ նա ան-

պատիվ է քաղաքում եւ անարգ ճանապարհով է ընթանում: Կաթողիկոսը նրան կանչում է Մայր Աթոռ, սակայն Բասենցին վախենում է եւ չի գնում: Հետո ապաստան է փնտրում Ավստրիայի դեսպանի մոտ՝ ցույց տալով իր հերձվածող եւ ուրացող լինելը: 1776-ին ապավինում է օտար պաշտպանության, բավական ժամանակ մնում է Հռոմում եւ Վենետիկում, 1781-ին գալիս է Տրիեստ՝ վախենալով եկեղեցական հասույթները եւ աթոռապատկան գումարները յուրացնելու համար պատասխանատվության ենթարկվելուց՝ որպես նվիրակ: Միմենոն 1776-ին ողջ էր եւ իրավամբ կարող էր դիմել նրան հովանավորող դեսպանին, որ այդ գողին չպաշտպանի: Դեսպանն ուղղամիտ գտնվեց եւ ընթացք տվեց կաթողիկոսի դիմումին, ուստի Բասենցին մնացած ամբողջ կյանքն անցկացրեց Տրիեստում՝ Վենետիկից անջատված Միսիթարյանների մոտ: Նա վախճանվեց 1796 թվի մարտի 17-ին: Խայտառակություն է, որ տապանագրում «արքեպիսկոպոս Էջմիածնիձիր» ասվածքը, որ ցույց է տալիս Էջմիածնում ձեռնադրված լինելը, մեկնվել է իբրեւ կոչում եւ տիտղոս՝ «արհիեպիսկոպոս Էջմիածնի», այն էլ այն դեպքում, երբ Էջմիածնում արքեպիսկոպոսը կամ արհիեպիսկոպոսը երբեք չի եղել վիճակի կամ եպիսկոպոսական աթոռի տիտղոս: Տապանագրի լատիներեն հատվածում նա պարզապես կոչված է հայ արքեպիսկոպոս: Փաստորեն՝ նա կաթոլիկացավ՝ Եկեղեցու ստացվածքը յուրացնելու պատճառով:

Շարունակությունը՝ էջ 4

Մարկելլին ՕԼԵՍԵՆԻՅԿԻ

Տե՛ս թիվ 19

ա) Վերածնունդը՝ որպես Աստծու օրհնություն

Մարդու վրա Աստծու ներգործությունը կոչվում է «վերածնունդ»: Վերածնունդը, բառի բուն իմաստով, հիմնականում կատարվում է մանուկների օծման (մկրտության) խորհրդի ժամանակ, մինչեւ մանկան գիտակից դառնալն ու ազատության ընկալումը: Վերածնունդը երախայից շրջանն է: Հետեւաբար, մարդը չի կարող օրհնության արժանանալ, քանի դեռ նա Սբ Հոգու շնորհներն ու զորությունը չի ստացել: Շնորհընկալությունից՝ օծումից հետո մարդ էակի համար բացվում է Աստծո օրհնության անբացատրելի աղբյուրը: Աստծու կամքով մարդը ծնվել է ազատ եւ ինքնուրույն բանական էակ. նրա կյանքում Աստված ներգործում է ոչ միայն անգիտակից, այլեւ գիտակից ընթացքի վրա: Ըստ այդմ՝ մարդու փրկությունն իրականացվում է ոչ միայն Աստծու օրհնությամբ, այլեւ սեփական ջանքերի շնորհիվ: Վերածննդի շրջանում մարդու վրա, մի կողմից, Հիսուսի մասին խոսքի կամ քարոզի միջնորդությունն են ազդում, մյուս կողմից՝ Աստծո նախախնամությունը: Պետրոս առաքյալը խոսքով վերածննդելու մասին այսպես է գրում. «Վերածննդեցե՛ք ոչ թե ապականության ենթակա սերմից, այլ՝ անապականից՝ Աստծու կենդանի եւ մշտնջենական խոսքով... այ-

սինքն՝ այն խոսքը, որ ավետարանվեց ձեզ» (Ա Պետ. Ա 23-25): Իսկ Հակոբոս առաքյալն այսպես է գրում. «Նա իր կամքով ծնեց մեզ ճշմարտության խոսքով» (Ա 18):

Վերածննդի օրհնությանը նպաստող կյանքի հանգամանքները լինում են արտաքին եւ ներքին: Արտաքինի շարքն են դասվում նախ՝ հասարակության կամ առանձին անհատների աղետալի տարբեր ցնցումները. օրինակ՝ Տերն ասում է Անգե մարգարեի բերանով. «Դարձյալ պիտի սասանեմ երկինքն ու երկիրը, ծովն ու ցամաքը, միաժամանակ պիտի ցնցեմ բոլոր ազգերին, այստեղ պիտի գան բոլոր ազգերի ընտիր-ընտիր ինչքերը, եւ ես պիտի լցնեմ այդ Տունը փառքով» (Անգե Բ 7-8): Երկրորդ՝ Աստծու տարբեր բարեգործությունները, որոնք շնորհում է մարդկանց. օրինակ՝ Հիսուսը պատրաստակամորեն գնաց Չակքետսի տուն, եւ այդ գնալն այնքան ուրախացրեց Չակքետսին, որ նրա մեղավոր հոգում նույն պահին փոփոխություն կատարվեց:

Ներքին հանգամանքների շարքն են դասվում հոգեւոր կարիքների, կյանքի դատարկության եւ անբավարարվածության զգացումները: Այն մարդուն, որը բարոյապես վերածնված չէ, տրտմեցնում է, քանի որ նա գտնվում է «խավարի եւ մահվան սովերների մեջ» (Ես. Թ 2), այսինքն՝ զրկված է իրական լույսից եւ չի տիրապետում ճշմարտությանը, կամ՝ «Հոր սերը նրա մեջ չէ» (Ա



Հովի. Բ 15). Նա ոչ մեկին անկեղծորեն չի սիրում, եւ փոխադարձաբար՝ իրեն չեն սիրում, կամ՝ «ներդության եւ անձկության մեջ գտվող ամեն մարդ չարիք է գործում» (Իմմտ. Հռոմ. Բ 9), եւ որ «քո անձի դեմ բարկություն ես դիզում բարկության օրվա եւ Աստծո արդար դատաստանի հայտնության օրվա համար» (Հռոմ. Բ 5), կամ՝ ընդհանրապես. «Ով ընդունում է Որդուն, ընդունում է նաեւ կյանքը, եւ ով չի ընդունում Աստծո Որդուն, չի ընդունում նաեւ կյանքը» (Հովի. Ե 12): Իսկ Աստծուն դառնալը ճշմարիտ քրիստոնյայի գործն է: Դարձի գալը մեղքից արմատապես բաժանվելն է եւ նոր կյանք մուտք գործելը. «Հեռո՛ւ վանեք հին մարդուն եւ հագե՛ք նոր մարդուն» (Եփես. Դ 22-24): Այդ բաժանումն իրականացնում է ազատ եւ գիտակից մարդը, բայց Աստծու ներգործության, ազատ

կամքի եւ օրհնության միավորությամբ նրա մեջ ձեւավորվում են նոր անձ, նոր բնավորություն, կատարվում են վերածնունդ եւ դարձ դեպի Աստված: Պողոս առաքյալն ասում է. «Իսկ թե՛ մեկը Քրիստոսի մեջ է, նա նոր արարած է, որովհետեւ հինն անցավ, եւ հիմա ամեն ինչ նոր եղավ» (Բ Կորնթ. Ե 17), «Նա իր կամքով ծնեց մեզ ճշմարտության խոսքով, որպեսզի մեք լինեք իր ստեղծածների պտուղը» (Հակ. Ա 18):

Դարձի եկողների կարելի է բաժանել երեք դասի: Առաջին դասին կարող ենք վերագրել մկրտությունից հետո մեղքի եւ մոլորությունների ճանապարհով ընթացողներին: Նրանք դարձի գալուց հետո պետք է հրաժարվեին մեղքից ու մոլորություններից: Որպես օրինակ՝ կարող ենք մատնանշել անառակ որդուն: Նման մարդկանց մասին այսպես է գրում Պո-

ղոս առաքյալը. «Գոհություն Աստծու. մեղքի ծառաներ էինք, բայց ի սրտե հնազանդվեցինք այնպիսի վարդապետության, որ ձեզ ավանդվեց: Արդ, մեղքից ազատագրվածներդ ծառայեցե՛ք արդարության» (Հռոմ. 2 17-18):

Երկրորդ դասին են պատկանում նրանք, որոնց չենք կարող բացահայտ կոչել ծանր մեղքեր գործողներ, բայց եւ չեն ապրում ավետարանական իդեալով, այլ, իրենց խելամիտ իդեալների համաձայն, չնայած որ չեն թողել Աստծուն, բայց միեւնույն ժամանակ ծառայում են նաեւ աշխարհին: Առաքյալի խոսքերով. «Մինչ երեխա էինք, բնության տարեդային ուժերին էինք ծառայում» (Գաղ. Դ 3), «բնության տարերային ուժերի վրա էինք հիմնված» (Կոր. Բ 8, 20):

Իսկ երրորդ դասին վերագրվում են քրիստոնյաների մեջ լավագույնները: Դրանք այն քրիստոնյաներն են, որոնք բարեբարո մանկություն են ունեցել եւ մեծանալով մնացել են անմեղ եւ ջանասիրությամբ ծառայում են Աստծուն: Նրանց նույնպես անհրաժեշտ է մկրտել: «Անառակ որդու» առաջից գիտենք, որ հորը հակառակվել էր ոչ միայն կրտսեր որդին, որը թողնելով հայրական տունը՝ գնացել էր մոլորության ճանապարհով, այլեւ ավագ որդին, որը մշտապես ապրում էր իր կամքի համաձայն (Ղուկ. ԺԵ 28): Հետեւաբար, հորը սիրող անմեղ ավագ որդին եւս անհնազանդ գտնվեց նրա հանդեպ (Հոբ Դ 17):

Շարունակությունը՝ էջ 5



ԱՐՁԱԿ

Մասնակի կրճատումներով

Սկիզբը՝ թիվ 11-17, 19

Հայ հայդուկ-ֆիդայիներն ազատության համար պայքարող իրենց բալկանյան նմանակների հետ ոչ միայն հայրենիքի գիւկոր էին, այլև մարդկային առաքիւնության չափանիշ։ Եվ պատահական չէ, որ վիպասքի «Քարայրը» գլխում նրանք բնութագրվում են այսպես. «Ո՛չ փառք, ո՛չ հանգիստ, ո՛չ հաշիվ։ Հայդուկության մեջ մտնողը պետք է իր ետեւում թողնի անձնասիրությունը եւ քանի դեպի ներս առաջանա, այնքան պիտի մերկանա իր եսից ու անձնականությունից։ Հայ ֆիդային ունի միայն մի իդեալ. տառապելով ծառայել հայոց ազատությանը։ Նա պետք է մեռնի գնդակով, կախաղանի վրա կամ բանտի մեջ, եթե հավատարիմ է իր ուխտին։ Ինչին է պետք եսական սերը, երբ կա ավելի մեծ սեր - հայրենիքի սերը» (Նույն տեղում, էջ 155)։ Ահա այս՝ իրոք հեքիաթային-առասպելական մարդկանց գործի ու նահատակության ողբերգական, բայց եւ հերոսական կյանքի պատկերումով էլ Դաշտենցը հյուսել է իր վիպասը։

Դաշտենցի վիպասքից ու նաեւ Ա. Բակունցի «Ծիրանի փողը» եւ «Մուրդի «գրուց»-ը» պատմվածքներից, Հ. Զոհարի «Կարոտ», «Նահապետը» վիպակներից են սերվում Մ. Գալշոյանի երկերի հերոսները, որոնց կյանքի ժամանակը գալիս հասնում է մինչեւ իր օրերը։ Գալշոյանն ինքն ազգային կյանքի այդ ծանր օրերի ակնարկները չէր, ակնարկները նրա հոր սերնդի ներկայացուցիչներն էին, որոնք Սասունից ներգաղթելով Արեւելյան Հայաստան՝ հիմնադրվել են քարքարոտ շր-

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ջաններից մեկում՝ Թալինում, այդտեղ հիմնել իրենց Նոր տունը, բայց եւ հիշողությամբ անընդհատ ոգեկոչել պատմական հայրենիքը։ Գալշոյանն իր հերոսներին չի կտրում հայրենի բնաշխարհից, նրանց հոգու մեջ արթնացած է ժառանգներին փոխանցվող կարոտը ծնունդ է ոչ թե սոսկ հայրենիքի վերացական ըմբռնման, այլ ծննդավայրի, մանկության եզերքների, ամբողջությամբ՝ բնաշխարհի ու նրա մարդկանց։

«Ձորի Միրոն» վիպակը զարգանում է հերոսի ներքին խոսքի աստիճանական ծավալմամբ։ Ստեղծվում է բովանդակային երկու հոսք՝ վերնուշի եւ դրանից բխող մտահանգումների, որն իրել է կենսափիլիսոփայություն՝ Միրոն ժառանգում է որդուն։ Բացվում են Ձորի Միրոյի կյանքի փակագծերը, որի էությունը, որպես շահախ, լցվում է նրա եւ որդու միջեւ՝ պատի երկու քարի նման նրանց ձուլվելով իրար։

Միրոյի միտքը թափառում է կորցրած ծննդավայրում եւ ծանոթ մարդկանց ու ապրված իրականության պատկերների միջոցով վերակոչում արդեն պատմություն դարձած կյանքը։ Այդ պատմությունն է, որ կենսունակ արմատի նման նրան կապում է իր հողին եւ ապրեցնում նրա ներկան։ Այդ ներկան եւս դժվարին մաքառում է գոյատեւման ու հաստատման համար. Նոր հիմնադրած գյուղում Ձորի Միրոն առաջինն է ծուխ հանում իր երդիկից եւ ամեն ինչ կորցնելուց հետո մտածում կյանքը Նորից վերսկսելու մասին։

«Ձորի Միրոյի» հետ օրգանական կապ ունի «Կածանի ճամփորդներ» վիպակը։ Դեպքերի վայրը Նույն Քարագլուխ գյուղն է, հերոսները Նույն գաղթականներն են՝ Ձորի Միրոյի սերնդակիցները։ Հեղինակն այստեղ չի առանձնացնում որեւէ կերպար, այլ լայն տարածքով ներկայացնում է այդ մարդկանց կյանքն ու կենցաղը, խոսքն ու գրույցը։ Հոգեբանությամբ բավականին իրար նման, արտաքուստ բավականին տարբեր մարդիկ են նրանք՝ Կռպեն, որ քար է աղում, որ հող ստեղծի, Օսուն, որ շարունակ ինքն իր մեջ գրուցում է աշխարհի ու քարերի հետ, Նոն, որ խորհրդանշում է անցյալն ու ներկան, հովիվ Ավգին, սայլապան Արոն, Կարդո մարեն եւ էլի ուրիշներ։ Հեռացող մի սերնդի ներկայացուցիչներ են նրանք, որ իրենց խոսքի, կենցաղի, պատմությունների, հիշողությունների մեջ պահում են կորուսյալ աշ-

խարհի վերջին հիշատակները։ Նոյի մահից հետո կորստի ու կարոտի նրբին մի շաղախով ձեւավորվում է հետեւյալ միտքը. «Ասեք, որ թաղեցինք արեւի տակ եղած վերջին ճախրկանցուն» մի գյուղ աշխարհի, մի հին աղաթ, լեզվի անուշ մի երանգ»։

Կարոտի երգ է հյուսում Մ. Գալշոյանը՝ հեռվում մնացած ծննդավայրի, այդ ծննդավայրի կորստի եւ կյանքից հեռացող մի սերնդի մասին, որի մեջ դեռեւս կենդանի էին հայրենիքի հիշատակները։

«Մարութա սարի ամպերը» (1981) ժողովածուի մեջ ամփոփված 19 պատմվածքներում եւս գրողը շարունակում է Նույն այս գիծը։ Նա դարձյալ շաղկապում է իր հերոսների անցյալն ու ներկան եւ գտնում նրանց տարիքային բեւեռները պատմահասարակական եւ հոգեբանական միասնության բերող ժամանակների կապը։ Գրքում գետեղված բոլոր երկերն էլ կարելի է բնութագրել որպես մեկ հերոսի դիմանկար-պատմվածք։ Պատումը խտանում է մեկ հերոսի մեջ եւ դառնում նրա կյանքի սկզբն ու վերջը ի մի բերող գեղարվեստական «ինքնակենսագրություն»։ Յուրաքանչյուր պատմվածք ստեղծված է հոգեբանական մի գյուղի հայտնաբերմամբ, որը եւ դառնում է հերոսների ներաշխարհը թափանցելու հիմնական նախադրյալ։

Կատարյալ մի պատմվածք է «Զեռի Թորոսը», որի ընդհանրացման ուժը ժողովրդի դարավոր վրեժն է թշնամու դեմ։ Հեղինակը հասել է ցավը կոկորդիս դեմ առած ժողովրդի ճակատագրի իմաստային եւ հոգեբանական տպավորիչ պատկերման։ Պատմվածքը հիշողության վրեժ է բռնագրավված հայրենիքի դիմաց։ Այդպիսին է եւ «Մամիրե արքան» պատմվածքը, որի հերոս Մամիրեն գառաձայն տարիքում սովորում է հայոց այբուբենը, որ գրի հիշողությանը պահ տա իր հայրենիքի ցավը։ Այդպիսին են նաեւ «Դավոն», «Ծովասարի Օհանը», «Պատրանք» եւ մյուս բոլոր պատմվածքները, որոնց հերոսները հիշողությամբ դեռեւս կռվում են հանուն հայրենիքի ազատության։

Նյութի գեղարվեստական յուրացման տեսակետից տարբեր սերնդների պատկանող արձակագիրների ստեղծագործության մեջ նկատելի են ուշագրավ օրինաչափություններ։ Ականատես արձակագիրների սերունդն արձանագրում է փաստը՝ ներկայացնելով դաժան իրականու-

թյան հավաստի պատկերները, հաջորդ սերունդը վերապատմում է տոհմի պատմությունը՝ շեշտելով կարոտն ու հիշողությունը։ Այս խմբավորման մեջ հիշատակելի են նաեւ մի քանի այլ գործեր։

Բնույթով եւ նշանակությամբ **Գ. Էմինի** «Յոթ երգ Հայաստանի մասին» գիրքը (վերամշակումներով ունեցել է երեք հրատարակություն՝ 1962, 1974, 1981) եւ **Վ. Պետրոսյանի** «Հայկական Եսթիզները» (որը եւս լրացումներով ունեցել է մի քանի հրատարակություն՝ 1969, 1983, 1984) կարելի է դասել, այսպես կոչված, **հայկական մտորումների** տարատեսակին։ Էմինը ոգեշունչ խոսք է ասում ընդհանրապես հայրենիքի բախտի ու ճակատագրի մասին՝ գրքում առանձնացնելով ենթագլուխներ, որոնցում մտորում է դարի, քարի, ջրի, հողի, հրի, գրի մասին՝ վերջում այդ ամենն ամփոփելով «Երգ երգոց» բաժնում։

Պետրոսյանի «Հայկական Եսթիզներում» ստեղծվում է մեր ժամանակակցի կերպարը, որը բազում հանդիպումներից, աշխարհի գրեթե բոլոր երկրներում հանգրվանած հայ ժողովրդի առանձին բեկորների վիճակված բախտի ու ճակատագրի մասին ունեցած մտորումներից հյուսում է իր հայրենապատումը, այսօրվա հայի եւ Հայաստանի մասին ունեցած իր պատկերացումը։ Պատմվածքի, նորավեպի, փաստագրության, հուշագրության, օրագրի խառնուրդ ունեցող, բայց մեկ ամբողջություն ներկայացնող այս ստեղծագործության գլխավոր հերոսը հեղինակն է։ Համապատասխան նյութի ոլորտում դիտված առարկայական իրականությունը բեկվում է նրա էության մեջ եւ վերաբերմունքի զգայական-մտավոր անմիջական արձագանքով իմաստավորում տեսած, լսած դեպքերն ու պատմությունները։ Հեղինակային վերաբերմունքը, որը նաեւ հայեցակետ է, դառնում է նյութի տարբեր մասերի միջեւ կապ ու ընդհանրություն ստեղծող կարեւոր գործոն։ Այդ ամենն իրենց հերթին աստիճանաբար հարստացնում են հերոսի կերպարը, որը կարծես դուրս է գալիս հեղինակային պատկանելությունից եւ ընդհանրացված ձեւով ներկայացնում հայրենիքի կենսական հոգսերով մտահոգված եւ Հայաստան-Սփյուռք ըմբռնումների իրական վիճակը ճանաչել ցանկացող ժամանակակից հայ մարդու հավաքական նկարագիրը։

Շարունակությունը՝ էջ 6

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ


ՄԻՍԵՐՆ Կ ԵՐԵՎԱՆԴԻ (1763-1780)

Սկիզբը՝ էջ 3

Հետաքրքիր անձ էր նաեւ Սամվել Երզնկացին, որը եղել է Պրուսայի եպիսկոպոսը։ Նա ծնվել է 1706-ին եւ աշակերտել է Կոլտին։ Եղել է Նալյանի տեղապահը, հետո դարձել է Պրուսայի առաջնորդը։ Նա այստեղ ժառանգործեց այն աստիճանի, որ Նալյանը, վատառողջության պատճառով թողնելով պատրիարքությունը, որպես իր հաջորդ՝ նրան առաջարկեց։ Սալյան Սամվելը հանձն չառավ։ Շամախեցու մահվանից հետո նա կաթողիկոսության թեկնածուների մեջ էր՝ Աստապատցու առաջարկությամբ, սակայն բուն ընտրության չհասավ։ Նա 66 տարեկան էր, երբ փորձեց հանգստության եւ բարոքության ակնկալիքով անցնել Արեւմուտք՝ հետեւելով Սարաֆյանին։ Կիպրոս քաշվելու պատրվակով նա 1772 թվի Նոյեմբերի 3-ին մեկնում է Պրուսայից, Կ. Պոլսում կարգավորում իր գործերը եւ դեկտեմբերի 22-ին նավով հասնում Մալթա։ Երկու անգամ փորձում է անցնել Մարսել եւ երկու անգամ՝ Իտալիա, սակայն ամեն անգամ ետ է

վերադառնում։ Հետո կարողանում է նավով մեկնել Չիվիթափեթիա, այստեղից էլ մայիսի 12-ին հասնում է Հռոմ։ Հռոմում նա հուսախաբվում է, սակայն զգուշանում է եւ դեռ դավանափոխ չի լինում։ 1773 թվի հոկտեմբերի 18-ին նա հայտնվում է Վենետիկում եւ ցածր աստիճանների ծեռնադրություն է կատարում։ Վերջապես 1774 թվին եպիսկոպոս Սիմոն Ումուդյանի մահից հետո նրան են հանձնում Հռոմում ձեռնադրիչ եպիսկոպոսի պաշտոնը։ 1778 թվին նրան կրկին տեսնում ենք Կ. Պոլսում, եւ, թերեւս, հռոմեացիականության դեմ ազդու գործիչ է եղել՝ անշուշտ Հռոմը տեսնելուց եւ ուսումնասիրելուց հետո։ Կյանքի մնացորդը նա անցկացրեց Խասքո թաղում՝ որպես եկեղեցական քարոզիչ։ Նա մահացավ 1786 թվին՝ 80 տարեկան հասակում, եւ թաղվեց Խասքոյի գերեզմանատանը։ Նրա օրինակը բոլորովին չի խոսում հռոմեացիականության դատի օգտին։

Իսկ ինչպե՞ս դասավորվեց Բասմաջյանի հետագա կյանքը։ 1777 թվին նա հաս-



տատվեց Անքոնայում, որտեղ մնաց մինչեւ 1782 թվին։ Նա այստեղ ձանձրանում է, քանի որ հմուտ չէր լատին լեզվի մեջ եւ չէր կարող հետեւել եկեղեցական արարողություններին, իսկ հայոց եկեղեցին եւ քահանան, անշուք լինելով, նրան չէին հետաքրքրում։ 1782 թվի ապրիլին նա գալիս է Վենետիկ եւ մի որոշ ժամանակ անցկացնում Սբ Ղազարի վանքում։ Հետո հրավիրվում է Հովհաննես աղա Սեդրոյանի կողմից, որը Նույն Սեդրոս մարքիզն է։ Ըստ

պրոպագանդայի ժողովի՝ Վենետիկում նա մնաց 6-7 ամիս։ Վենետիկում նա մի թեթեւ հիվանդացավ, եւ նրան խնամեցին Միսիթայանները։ Հետո նա հիվանդացավ անբուժելի հիվանդությամբ, իսկ այդ շրջանում նրան խնամել է պրոպագանդայի ժողովը։ 1789-ին նա փոքր-ինչ կազդուրվում է, սակայն տարիուկես անց՝ 1791 թվի հունիսի 22-ին, վախճանվում է՝ Տրիեստ քաղաքում։ Նա թաղվեց Սան Ջուստոյի Մայր եկեղեցու դռան առջեւ՝ ապրելով 78 տարի։ Բաբկեն եպիսկոպոս Կյուլեսերյանը, հրապարակելով նրա բնագրերը, գալիս է այն եզրակացության, որ Բասմաջյանը կաթոլիկ չէր եւ երբեք չի համարձակվել դատապարտել Հայ եկեղեցին։ Պարզապես կյանքում նա շատ է ձախողվել՝ իր անկայուն բնավորության պատճառով։ Նա ո՛չ Կոլտի եւ ո՛չ էլ Նալյանի ճարտարությունը չունեւ, ուստի մե՛կ հաշտարար եւ մե՛կ հաստատակամ ուղղություն էր ցույց տալիս։ Նա գրել է «Յիշատակարան», որտեղ աշխատել է իրեն նպաստավոր գծերով ներկայացնել։ Նա չի հրաժարվում այն փաստից, որ եղել է ամիրաների եւ մասնավորապես Գասպար Մուրադյանի կամակատարը, սակայն դրանից չի շահել եւ լոկ բացահայտել է իր թույլ կողմերը։

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ,
պրոֆեսոր



Հոկտեմբերի 15-ին Երեւանում տեղի ունեցավ Իզմիրյան բժշկական հաստատության եւ Սուրբ Ներսես Մեծ գիտաբժշկական կենտրոնի վերաբացման արարողությունը՝ հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

Շրջայնի ավարտին արարողության մասնակիցներին ողջունեց կենտրոնի տնօրեն, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Մուրադյանը՝ մասնավոր ուրախություն հայտնելով հիվանդանոցի հիմնական բարերար Տիգրան Իզմիրյանի

Ապա հայրապետական իր օրհնությունն ու գնահատանքը ներկաներին բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

«Մեծ ուրախությամբ կատարեցինք բացման արարողությունը հիմնանորոգված «Իզմիրյան» բժշկական կենտրոնի։ Գոհունակություն է Մեզ համար անդրադառնալ, որ այս կարեւոր միջադեպում մասնակից է նաեւ Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Սերժ Սարգսյանը, ով իր բարձր եւ պատասխանատու առաքելության ընթացքում մշտապես մեծ գորակցություն ու կարեւոր աջակցություն է ցուցաբերում նաեւ բարեսիրական, խնամատար ծրագրերի իրականացմանը։

Սիրելիներ, շուրջ մեկ տասնամյակ առաջ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին



րամի աջակցությամբ հիմնանորոգված «Իզմիրյան» բժշկական հաստատությունն իր մեջ ներառում է նաեւ «Սուրբ Ներսես Մեծ» գիտակրթական կենտրոնը։ Հիվանդանոցը՝ «Սուրբ Ներսես Մեծ» գիտակրթական կենտրո-

կարեւոր ուսուցումներից է ավտարանական այս խոսքը, որով Զրիստոս հոգեւորի հետ մեկտեղ նաեւ մարմնի մասին է հիշատակում։ Հիմնականում, պարտավոր ենք, հոգեւորն արժեւորելով, մարմնի մասին մտածել, առողջության հա-

ԵՐԵՎԱՆՈՒՄ ՎԵՐԱԲԱՅՎԵՑ ԺՆՄՈՐԼՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՄԵԾ ԳԻՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ



կոսի եւ ներկայությամբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ու ազգային բարերարներ շվեյցարահայ տեր եւ տիկին՝ Տիգրան եւ Հելենա Իզմիրյանների։

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Իզմիրյան ընտանիքի անդամներ, ՀՀ պետական այրեր, առողջապահության ոլորտի ներկայացուցիչներ, «Իզմիրյան» հիմնադրամի պաշտոնեւորները, նորաբաց հաստատության աշխատակազմը եւ հյուրեր։

Հայ Եկեղեցու հովանու ներքո գործող բժշկական այս հաստատությանն ի նպաստ՝ «Իզմիրյան» հիմնադրամի եւ տիկին Լուիզ Մանուկյան Սիմոնի բարերարությամբ իրականացվել է 12 մլն ԱՄՆ դոլարի ծրագիր, որի շնորհիվ հիվանդանոցը հիմնանորոգվել է եւ համալրվել նոր մասնաշենքով։

Բժշկական կենտրոնի ընդարձակ նախարահում կատարվեց նորաբաց հաստատության օրհնության կարգ, որից հետո ներկաներին ներկայացվեցին Իզմիրյան բժշկական հաստատության եւ Սբ Ներսես Մեծ գիտաբժշկական կենտրոնի հիմնանորոգության աշխատանքները, պայմաններն ու ձեռք բերված ժամանակակից բժշկական սարքավորումները։

Եւ նրա ընտանիքի անդամների ներկայության համար։ Արմեն Մուրադյանի իր երախտագիտությունն արտահայտեց Վեհափառ Հայրապետի կողմից հաստատության նկատմամբ դրսեւորվող հոգատարության եւ ազգային բարերարներ Տիգրան Իզմիրյանի եւ Լուիզ Մանուկյան Սիմոնի պատրաստակամ հանձնառության համար, ինչի շնորհիվ հնարավոր դարձավ Հայաստանում ժամանակակից, բարձր տեխնոլոգիաների կիրառությամբ բժշկական կենտրոնի բացումը, անդրադարձավ նաեւ հաստատության բժշկական անձնակազմի կողմից իրականացվող սոցիալական ծրագրերին եւ հիվանդների մատուցվող ծառայությունների զարգացման հեռանկարներին։

Այնուհետեւ արարողության մասնակիցները դիտեցին «Շողակաթ» հեռուստաընկերության կողմից պատրաստված «Իզմիրյան բժշկական կենտրոն. անցյալը եւ ներկան» ֆիլմը։

Ողջույնի խոսքով ներկաներին դիմեց նաեւ «Իզմիրյան» հիմնադրամի ավագ փոխնախագահ Գրեգորի Ջերեջյանը՝ անդրադառնալով հիմնադրամի կողմից Հայաստանում իրականացված բազմաբնույթ ծրագրերին։

Նվիրաբերեց նախկին Պրոկտորգիայի ինստիտուտը, որը տարիներ շարունակ դժվարին իրավիճակներում ծառայություններ մատուցեց՝ բարեկարգ պայմաններում գործունեություն իրականացնելու այս բերկրալի օրը հուսալով։ Բժշկական կենտրոնի հիմնանորոգմանը սրտաբուխ բարերարությամբ մեծ ներդրում բերեցին մեր Սուրբ Եկեղեցու նվիրյալ զավակներ տեր եւ տիկին՝ Տիգրան եւ Հելենա Իզմիրյանները՝ որպես հիմնական բարերարներ, ինչպես նաեւ մեծազնիվ տիկին Լուիզ Մանուկյան Սիմոնի զգալի ներդրում կատարեց այս աստվածահաճ գործի իրականացման համար։ Մեր սիրելի բարերարներն ազգային-եկեղեցական կյանքի բարգավաճմանն ու շինությանն ի խնդիր իրենց մեծագործություններին հավելեցին նաեւ առատաձեռն նվիրաբերություններով իրականացված այս հիվանդանոցի նորոգությունը, որը, ի հիշատակ բարերար Տիգրան Իզմիրյանի լուսահոգի ծնողներ Սարգիս եւ Մարի Իզմիրյանների, կոչվեց «Իզմիրյան» բժշկական կենտրոն։ Հիվանդանոցի վերանորոգմամբ եւ բարեկարգ պայմանների ստեղծմամբ գործունեության նոր սկիզբ է դրվում հոգատարության ու խնամքի այս հաստատության, որը հիմնական բազմաթիվ մարդկանց համար պիտի լինի «տեղի ապաստան եւ բժշկութեան»։ Այսօր վերակերտյալ հիվանդանոցի բացումը կատարեցինք այս վստահությամբ եւ սպասումով, որ բժշկական հաստատությունն առավել արդյունավորությամբ շարունակի մեծ օգտակարություն բերել բժշկության կարիքն ունեցող մարդկանց։

Փառք եւ գոհություն Աստծո, որ Մեր զավակների առողջության, հոգածության ու խնամքի համար հնարավոր եղավ կյանքի կոչել «Իզմիրյան» բժշկական կենտրոնի ստեղծման ազգօգուտ ծրագիրը։ «Իզմիրյան» հիմնադ-



նով, պիտի գործի Սուրբ Ներսես Մեծ Կաթողիկոսի կյանքի վառ օրինակով, ով իր առաքելությունը բարեգործեց նաեւ խնամատար, բարեսիրական գործունեությամբ եւ ամրապնդեց մեր Սուրբ Եկեղեցու սոցիալական ծառայության հիմքերը։ Այս սկզբունքով «Իզմիրյան» բժշկական կենտրոնը շարունակելու է մատուցել բժշկական ծառայությունների բարձր որակ եւ մատչելիություն, նաեւ բարեգործական սկզբունքով՝ ծառայություններ շրջաններում եւ քաղաքամայր Երեւանում սոցիալապես անապահով հիվանդների համար։

Մեր Տերը՝ Հիսուս Զրիստոս, Իր փրկչական առաքելության մեջ հատուկ ուշադրություն էր դարձնում նաեւ հիվանդների բժշկությանը, ինչպես վկայում է ավետարանիչը՝ Նշելով, որ Տերը քարոզում էր արքայության Ավետարանը եւ բժշկում էր ժողովրդի մեջ եղած բոլոր հիվանդությունները (Մատթ. Դ 23)։ Մեր սուրբ հայրերը հոգու փրկության հետ մեծապես կարեւորել են երկրային այս կյանքում մարմնի առողջության համար հոգալը։ Մարդու կյանքի եւ արդյունալի գործունեության նախապայման է առողջությունը։ Զրիստոս ասում է. «Հոգին առավել է, քան կերակուրը, եւ մարմինը՝ քան հագուստը» (Ղուկ. ԺԲ 23)։ Մեր Տիրոջ վարդապետության

մար հոգալ, քանզի մարդը միայն հոգի չէ եւ ոչ էլ՝ սոսկ մարմին, այլ այս երկուսի միավորությամբ է՝ ստեղծված աստվածային պատկերով եւ նմանությամբ։ Դրա համար Սուրբ Եկեղեցին հոգու փրկության առաքելության իրականացմամբ մշտապես կարեւորել է նաեւ մարդու ֆիզիկական առողջության համար հոգատարությունը, քանզի աստվածաշնորհ կյանքը բարի գործերով առավել կարող ենք արժեւորել, երբ գործել ենք առողջությամբ։

«Իզմիրյան» բժշկական կենտրոնի բացման առիթով Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց «Իզմիրյան» բժշկական կենտրոնի հիմնանորոգման նախաձեռնությանը մեծ օգտակարություն ցուցաբերած բոլոր անձանց, «Այգեճոր» շինարարական ընկերությանը, ճարտարապետներին եւ հիվանդանոցի քաջեռանդ բժիշկներին ու աշխատակիցներին։

Ի գնահատություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնին մատուցած բացառիկ ծառայությունների եւ ազգային-եկեղեցական անդաստանում իրականացրած ազգանվեր ձեռնարկների համար՝ Նորին Սրբությունը տիար Տիգրան Իզմիրյանին շնորհեց «Ասպետ Ս. Էջմիածնի» տիտղոս եւ հայրապետական շքանշան։

Շարունակությունը՝ էջ 9

Տոկոսների 19-ին Տավուշի թեմում, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Հաղարծնի վանական համալիրի բացման արարողությունը:

Վանքը հիմնանորոգվել է Արաբական Միացյալ Եմիրությունների Գերագույն խորհրդի անդամ, Շարժայի կառավարիչ Նորին Գերագանցություն շեյխ ղոկտոր սուլթան բին Մոհամմադ ալ-Զասիմիի սրտաբուխ բարերարությամբ:

Բացման արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, Շարժայի կառավարիչ շեյխ սուլթան բին Մոհամմադ ալ-Զասիմիի ներկայացուցիչ Համիդ Դիյա Ջաֆարը, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, Մայր Աթոռի միաբաններ, Տավուշի մարզպետ Արմեն Դուլարյանը, Դիլիջանի քաղաքապետ Արմեն Սանթրոսյանը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի տնօրեն Արա Վարդանյանը, ՄԱԷ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գեղամ Դարիբջանյանը, Շարժայի հայ համայնքի անդամներ և հյուրեր:

Վանքի բացման և օրհնության արարողությունից հետո ներկաներին ողջույնի խոսքով դիմեց Տավուշի թեմի առաջնորդ Եզնիկ արք. Պետրոսյանը: Սրբազանն իր ուրախությունն արտահայտեց վանքի՝ շեյխ Զասիմիի շնորհիվ հիմնանորոգության և բարեկարգման առիթով՝ ընդգծելով, որ այն սիրելի ուխտավայր է ինչպես հայորդիների, այնպես էլ Հայաստան այցելող օտարների համար: Եզնիկ սրբազանը նաեւ անդրադարձավ վանքերի կարելու պատմական դերակատարությանը՝ ընդգծելով, որ բարենորոգված Հաղարծնը, այսուհետ լիարժեք գործելով, կվերագտնի իր հիմնական առաքելությունը՝ դառնալով միջկրոնական երկխոսության գործնական վկայությունը:



բայրների, և նրանց համար անվտանգ կեցություն ապահովել: Հայերն էլ, իրենց հերթին, դարձրեցին շարունակ Արաբական աշխարհի ամենահարմար վայրն են նկատել իրենց ազգային ինքնության պահպանության համար և ի պատասխան՝ մեծապես

սյուններ հանդիսացող շարունակական միջկրոնական երկխոսությունը, այլ կրոնների և մշակույթների հանդեպ հանդուրժողականությունը, փոխադարձ հարգանքն ու սերը:

Այս առիթով տիար Ջաֆարը նաեւ շնորհակալություն հայտ-

կայացուցիչը՝ մեծարգո տիար Համիդ Դիյա Ջաֆարը:

...Սիրելիներ, Հաղարծնի հիմնավորը վանքը, շարականագրի խոսքով, արդեն նորափետուր գարդարյալ, իր դռներն է բացում հավատավոր բոլոր ուխտավորների առջեւ: Բարեգարդված այս կամարների ներքո մշտափունջ պիտի լինեն առ Աստված բարձրացող աղոթքն ու գոհաբանական փառաբանությունը, և աստվածային շնորհները պիտի բաշխվեն՝ զորացնելով աստվածաշնորհության առաքինի ընթացքը Տիրոջ հավատավոր հոտի:

Հաղարծնի վանքն ավելի քան հազար տարի իր ներդրումն է բերել հայոց հոգեւոր, ազգային-մշակութային կյանքի առաջընթացին: Մեր պատմիչները խոսել են Հաղարծնի մասին՝ նաեւ որպես ուսումնագիտական հայտնի կենտրոնի, որը մեծապես նպաստել է ազգային մեր անդաստա-

թային սերտ առնչություններով են շաղկապված հարաբերությունները հայոց և արաբական աշխարհի, որը վաղնջական օրոններից է մարդկության քաղաքակրթության: Հայ-արաբական բարեկամությունը փրկարար եղավ մեր ժողովրդի համար Հայոց ցեղասպանության դժնդակ օրերին, երբ եղեռնից մազապուրծ բազմահազար հայորդիներ ապաստանեցին արաբական աշխարհի տարբեր երկրներում, հոգածություն, հյուրասիրություն ու խնամք գտան իրենց արաբ եղբայրների և քույրերի կողմից: Արաբական բարեկամ երկրների իշխանությունները ամենուր սատար և աջակից եղան հայորդիներին՝ կազմակերպելու ազգային-հոգեւոր իրենց կյանքը, քանզի վստահ էին հայ համայնքների օրինապահ ընթացքին և բարեկամական զգացումներին եղբայր ժողովուրդների նկատմամբ: Մեր ժողովուրդների եղ-

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՀԱՊԱՐԾՆԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԲԱՃԱՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

նպաստել են այդ երկրների շենացմանը՝ հաջողությամբ ներգրավվելով առեւտրի, արհեստների և այլ ոլորտներում:

Նորին Գերագանցություն շեյխ սուլթան բին Մոհամմադ ալ-Զասիմիի միշտ բարձր է գնահատել Շարժայի հայ համայնքին՝ որպես հասարակության բարեպաշտ, հավատավոր, վստահելի և աշխատասեր անդամների՝ ընդգծելով հատկապես հայորդիների սերը գիտելիքի և կրթության նկատմամբ: Նորին Գերագանցության սերն ու գնահատանքը Շարժայի հայ համայնքի հանդեպ լավագույնս դրսևորվեց, երբ նա տարածք նվիրաբերեց Արաբական Միացյալ

ևեց ՀՀ ԱԺ նախագահին և տիար Վարուժ Ներգիյանին՝ Հաղարծնի վանական համալիրի վերանորոգության գործում ներդրած ջանքերի համար:

Ապա վանքի բացման առիթով ներկաներին շնորհավորեց ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը: Իր խոսքում ԱԺ նախագահն անդրադարձավ մասնավորապես հայ-արաբական դարավոր բարեկամությանը և ներկայիս համագործակցությանը Հայաստանի և Միացյալ Արաբական Եմիրությունների միջև: Այնուհետև տիար Աբրահամյանը տեղեկացրեց, որ Արաբական Միացյալ Եմիրությունների Գերագույն խորհրդի անդամ, Շարժայի կառավարիչ Նորին Գերագանցություն շեյխ ղոկտոր սուլթան բին Մոհամմադ ալ-Զասիմիի ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից պարգևատրվել է Պատվո շքանշանով: Իսկ Շարժայի կառավարչի ներկայացուցիչ Համիդ Դիյա Ջաֆարին տիար Աբրահամյանը հանձնեց «Ամանիա Շիրակացի» մեդալ՝ տնտեսական կապերի զարգացման և ամրապնդման գործում կարելու ներդրման համար:

Վերջում ներկաներին օրհնության խոսք ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Գոհություն ենք մատուցում Երկնավորին, որ օրինեց Հաղարծնի նշանավոր պատմական համալիրի հիմնանորոգման բարի ձեռնարկումը: Փառք ենք մատուցում Բարձրալին, որ հավատքը, մարդասիրությունը, եղբայրասիրությունը զորեղ են մարդկային ներաշխարհում, և այդ ոգով երկնահաճո բարեգործություններ են իրականացվում՝ աստվածաշնորհ կյանքը լցնելով օրհնությամբ և խնդությամբ:

Հաղարծնի վանական համալիրի վերանորոգությունը և միաբանական շենքի կառուցումը իրականացվեց հայ ժողովրդի մեծ բարեկամ, Շարժայի շեյխ ղոկտոր սուլթան բին Մոհամմադ ալ-Զասիմիի սրտաբուխ նվիրատվությամբ: Այսօր թեպետ այստեղ չէ պատվարժան շեյխը, սակայն մեզ հետ է իր խոհերով, բարի կամեցողությամբ ու բարեկամության ջերմ զգացումներով, որոնք մեզ փոխանցելու է եկել նրա ներ-



նում կրթության և լուսավորության տարածմանը և հայ գիտական մտքի զարգացմանը: Բարեկարգ պայմաններում նոր պայծառությամբ պիտի գործի Հաղարծնի վանքը և վանական կյանքի վերահաստատումով պիտի արգասավորվի Ավետարանի քարոզության ու կրթագիտական նրա առաքելությունը:

Պատվարժան շեյխի վսեմագործությունն արտահայտություն է հայոց հանդեպ նրա եղբայրասիրության ջերմ զգացումի և հայ-արաբական բարեկամության: Պատմության դարավոր իրադարձությունների հիշատակներով, տնտեսական ու մշակու-

բայրությունն ու հաստատված անքակտելի բարեկամությունն առիթ տվեցին ազգիս զավակներին մասնակցելու և նպաստելու իրենց համար երկրորդ հայրենիք դարձած արաբական երկրների վերելքին, բարգավաճմանն ու ծաղկումին:

Գոհունակություն է Հայոց Հայրապետիս համար անդրադառնալ, որ պատվարժան շեյխ ղոկտոր սուլթան բին Մոհամմադ ալ-Զասիմիի զորակից եղավ Շարժայում հայ համայնքի հաստատմանը և հավատավոր մեր զավակների ազգային կյանքի կազմակերպմանը:

Շարունակությունը՝ էջ Գ



Այնուհետև իր սրտի խոսքն ասաց տիար Համիդ Դիյա Ջաֆարը: Շնորհավորելով վանքի վերաբացման առիթով՝ տիար Ջաֆարն ամենքին փոխանցեց Շարժայի կառավարիչ շեյխ սուլթան բին Մոհամմադ ալ-Զասիմիի ողջույններն ու բարեմադրանքները, ինչպես նաեւ՝ ափսոսանքը, որ չի կարողացել անձնապես ներկա գտնվել այս հատկանշական և մեծ իրադարձությանը: Շարժայի կառավարչի նվիրակն անդրադարձավ նաեւ Արաբական աշխարհում և մասնավորապես Միացյալ Արաբական Եմիրություններում բնակվող հայերի նկատմամբ արաբ ժողովրդի վերաբերմունքին: «...Արաբական աշխարհը մասնավորապես, հակառակ որ հիմնականում մահմեդական է, միշտ գնահատել է հայերին՝ որպես եղ-

Եմիրություններում միակ հայկական եկեղեցու կառուցման համար, որն օծվեց 1998 թվականին»,- նշեց տիար Համիդ Ջաֆարն իր խոսքում՝ հավելելով, որ շեյխ սուլթան բին Մոհամմադ ալ-Զասիմիի մեծապես հպարտ է նաեւ պատմական Հաղարծնի վանական համալիրի վերանորոգության գործում ներգրավված լինելու համար:

Իր խոսքում շեյխ Զասիմիի նվիրակն ընդգծեց, որ շեյխ սուլթան բին Մոհամմադ ալ-Զասիմիի մեծապես հպարտ է նաեւ պատմական Հաղարծնի վանական համալիրի վերանորոգության գործում ներգրավված լինելու համար:



ՏԵՌԻ ՈՒՆԵՑԱՎ ՀԱՊԱՐԾՆԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԲԱՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ



Սկիզբը՝ ԵԲ

Պատվարժան շեյխի ազնիվ գորակցությամբ Է կառուցվել Շարժայի հայոց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որի շուրջ ներկայումս համախմբված է հայ համայնքի կյանքը: Այստեղ բնակություն հաստատած մեր ժողովրդի զավակները՝ գործարարներ, արհեստավորներ, բժիշկներ, ճարտարապետներ, ճարտարագետներ, երախտագետ սրտով իրենց բարի նպաստն են բերում Արաբական Միացյալ Էմիրությունների զարգացմանն ու բարգավաճմանը: Ուրախալի է, որ այսօր զարգացում են ապրում Արաբական Միացյալ Էմիրությունների և Հայաստանի Հանրապետության միջպետական հարաբերությունները: Տարիներ առաջ հարգարժան շեյխի Հայաստան այցելությամբ այդ հարաբերություններն առավել ամրապնդվեցին՝ գիտական, մշակութային, տնտեսական բնագավառներում համագործակցության, ինչպես նաև քաղաքակրթությունների երկխոսության նոր հեռանկարներով:

Այս նշանակալի առիթով Մեր հավատավոր ժողովրդի անունից, ի դեմս մեծարգո տիար Համիդ Դիյա Ջաֆարի, խորագրաց շնորհակալություն ենք հայտնում Եւ Մեր գնահատանքը բերում Շարժայի շեյխ ղոկտոր սուլթան բին Սոհամմադ ալ-Զասիմին՝ իր ազնիվ հանձնառության համար՝ մաղթելով արեւատ կյանքի երկար օրեր, բարի կառավարում Եւ երկնահաճ գործոց հաջողություններ»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը հայրապետական իր գնահատանքն ու օրհնությունը բերեց նաեւ վանական համալիրի նորոգությանը նպաստ բերած «Հայաստան» համահայկական հիմնադրամին, նորոգության գործում մեծ ջանքեր ներդրած հայորդիներին՝ տիար Վարուժ Ներգիզյանին Եւ Հրայր Սողոմոնյանին, ինչպես նաեւ՝ վերականգնող ճարտարապետներին ու շինարարներին:

Իր խոսքի ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը հրավիրեց ներկաներին հայ Եւ արաբ

ժողովուրդների բարեկամության գեղեցիկ՝ նոր վկայություն մատուցող Հաղարծնի վանական համալիրից միասնական աղոթք բարձրացնելու երկինք՝ հայցելով, որ ամենակալ Աստված հաստատուն պահի մեր երկրների ու ժողովուրդների եղբայրությունը, ամրապնդի խաղաղությունն ու համերաշխությունն աշխարհում, համայն մարդկության կյանքում:

Արարողության ավարտից հետո ներկաները շրջաց կատարեցին վանական համալիրում:

Հոկտեմբերի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե Եւ Թամար Մանուկյան» մատենադարանում Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք Եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Շարժայի կառավարիչ շեյխ սուլթան բին Սոհամմադ ալ-Զասիմին՝ ներկայացուցիչ Համիդ Դիյա Ջաֆարի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը պատվարժան հյուրերին ողջունեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը: Այնուհետեւ տեղի ունեցավ պարզեաբաշխություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը Ս. Էջմիածնի պատկերով հուշամեդալներ հանձնեց տիար Համիդ Դիյա Ջաֆարին, ինչպես նաեւ՝ Հաղարծնի վանական համալիրի վերանորոգման աշխատանքներին իրենց գործուն մասնակցությունը բերած պրն Վարուժ Ներգիզյանին Եւ պրն Հրայր Սողոմոնյանին:

Իր հերթին տիար Համիդ Ջաֆարն ուրախություն արտահայտեց Շարժայի շեյխի ազնիվ բարերարությամբ նորոգված Հաղարծնի վերաբացման առիթով Եւ իր շնորհակալությունը հայտնեց Նորին Սրբությանը ցուցաբե-

րած ջերմ ընդունելության համար:

Ապա Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Սուշեղ եպս Բաբայանի կողմից ընթերցվեց հայրապետական սրբատառ կոնդակը, որով վանական համալիրի վերանորոգության գործում ներդրած ջանքերի համար տիար Վարուժ Ներգիզյանին շնորհվեց Հայաստանայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշան:

Շնորհակալական խոսքով հանդես եկավ տիար Վարուժ Ներգիզյանը: Շնորհաբաշխու-

րում են: Որով մարդկությունը կարող է աստվածահաճո կյանքով ապրել երկրավոր այս ժամանակավոր կյանքի մեջ: ...Իսկ խորհուրդը, որ իսլամ հավատքի ներկայացուցիչն է հովանավորը Հաղարծնի վանական համալիրի, պիտի շաղախի յուրաքանչյուր հավատացյալի հոգին Եւ բարձրացնի այն գիտակցությունը, որ մենք մեկ եւ նույն Աստծու զավակներն ենք՝ կոչված փառաբանելու Նրան այս երկրի վրա»:

Վեհափառ Հայրապետը նաեւ իր գնահատանքը հայտնեց Համիդ Ջաֆարին Եւ նրա տիկնոջը՝



թյան արարողությունն ավարտվեց Վեհափառ Հայրապետի օրհնության Եւ գոհունակության խոսքով: Նորին Սրբությունը, անդրադառնալով իսլամ հավատքի հետեւորդի կողմից Հաղարծնի վանքի նորոգությանը, մասնավորապես ասաց. «Սա մարդկությանը Եւ աշխարհին մատուցվող գեղեցիկ օրինակ է, որ կրոները համերաշխ ապ-

Շարժայի շեյխի ազնիվ զգացումները փոխանցելու Եւ մեր ժողովրդի ուրախությունը կիսելու համար:

Հանդիպման ավարտից հետո տիար Համիդ Դիյա Ջաֆարի գլխավորած պատվիրակությունը շրջեց Մայր Աթոռում՝ ծանոթանալով Հայ Եկեղեցու պատմությանը, այցելեց թանգարաններ, եղավ Մայր տաճարում:

ԵՐԵՎԱՆՈՒՄ ՎԵՐԱԲԱՑՎԵՑ...



Սկիզբը՝ ԵԼ

Ապա ներկաներին իր սրտի խոսքն ասաց Տիգրան Իզմիրյանը: Ազնվահոգի բարերարն ուրախություն հայտնեց իր ծնողների՝ Սարգիս Եւ Մարի Իզմիրյանների հիշատակին հիմնովին վերանորոգված կենտրոնի բացման առիթով՝ ընդգծելով, որ յուրաքանչյուր հայորդու համար, ուր էլ որ նա լինի, հայրենիքի, Մայր Եկեղեցու Եւ ժողովրդի հանդեպ ազգային պարտականությունը պետք է մնա անխախտ Եւ հարատեւ: Տիար Իզմիրյանը գնահատանքով շեշտեց նաեւ, որ ազգային բարերար Լուիզ Մանուկյան Սիմոնի առատաձեռնությունն ու Մանուկյան ընտանիքի օրինակն են իրեն խանդավառել կարելու այս հանձնառության մեջ:

Հանդիսության ավարտին վերաբացված բժշկական հաստատության պուրա-

Համայն հայության հոգեւոր կենտրոնում Իզմիրյան ընտանիքը ծանոթացավ Մայր Աթոռի կողմից իրականացվող կրթադաստիարակչական, քարոզչական, եկեղեցաշինական Եւ սոցիալական գործունեությանը, այցելեցին նաեւ Մայր տաճար, Ս. Հրեշտակապետաց եկեղեցի Եւ «Ռուբեն Սեւակ» թանգարան, եղան Մայր Աթոռում գործող տարբեր կառույցներում, իրենց խոնարհումը բերեցին ՀՀ ազգային հերոս, ՀԲԸՄ ցկյանս նախագահ Ալեք Մանուկյանի Եւ նրա կողակից Մարի Մանուկյանի շիրիմներին:

Հանդիպումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը Եւ բարերարների ընտանիքն այցելեցին Էջմիածնի «Հրաչ Եւ Սյունի Թուֆայաններ» հայորդյաց տուն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնակցեց եկեղեցիների համաշխարհային խորհրդի 10-րդ համագումարին

Հոկտեմբերի 28-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք Եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունը մեկնեց Հարավային Կորեա՝ մասնակցելու հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 8-ը Հարավային Կորեայի Բուսան քաղաքում կայանալիք եկեղեցիների համաշխարհային խորհրդի 10-րդ համագումարին:

Հայրապետական շքախմբի Եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատվիրակության կազմում են Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքական փոխանորդ Արամ արք. Աթեշյանը, Վիգեն արք. Այբազյանը (ԱՄՆ Արեւելյան թեմ), Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանը, Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հիմնադրույթների գրասենյակի տնօրեն Բագրատ եպս Գալստանյանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպս Նալբանդյանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Հովակիմ եպս Մանուկյանը, Ավստրալիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն եպս Նաջարյանը, Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի միաբան Բագրատ վրդ. Պուրճեկյանը, Վեհափառ Հայրապետի զավագանավոր Աղան արքեպիսկոպոս, Մայր Աթոռի բարերար Գաբրիել Զեմպերճյանը, հայաստանյան «Կլոր սեղան» միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի տնօրեն ղովկ. Կարեն Նազարյանը, Մայր Աթոռի համացան-

ցային ծառայությունների գրասենյակի տնօրեն Փուլա Տեր-Մաթոյանը, Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակից Գոհար Ղալաչյանը, Լոզանի համալսարանի ղովկոտրան Անի Ղազարյանը:

«Կյանքի Աստված, առաջնորդի՛ր մեզ դեպի խաղաղություն Եւ արդարություն» խորագիրը կրող համաժողովի բացման հանդիսավոր արարողությունը տեղի կունենա Բուսանի ցուցահանդեսների սրահում, որտեղ համաժողովի 4000 մասնակցին իր պատգամը կհղի Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Համաժողովին մասնակցելու են 150 երկրի շուրջ 360 եկեղեցու ներկայացուցիչներ, եկեղեցու պետեր, բարձրաստիճան պաշտոնյաներ, հասարակական գործիչներ: Համաժողովի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետն առանձին հանդիպումներ կունենա տարբեր եկեղեցիների առաջնորդների Եւ ԵՀԿ պաշտոնյաների հետ:

ՀԱճ պավիրակների մեծ մասը ներգրավված է համաժողովի տարբեր աշխատանքային խմբերում Եւ ԵՀԿ կոմիտեներում: Որպես երիտասարդ մասնակիցներ՝ համագումարի աշխատանքներին իրենց օգտակարությունն են բերելու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի Եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի աշխատակից Տաթևիկ Հակոբյանը Եւ ԵԴՀ աստվածաբանության ֆակուլտետի ուսանող Սարգիս Մեղնիսյանը:

Ուխտերը սիրո, հավատքի եւ հավատարմության «Ուխտդ կատար, սիրելի ուխտավոր՝ հայրդի, Ասված օգնական չեզ»

Հոկտեմբերի 20-ին տեղի ունեցավ Սիրո, հավատքի եւ հավատարմության ուխտերը՝ կազմակերպված Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու երիտասարդաց միավորման, մի շարք երիտասարդական կառույցների եւ հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ։ Ուխտերը կոչված էր վերահաստատելու հայ երիտասարդության հավատարմությունը ազգային-հոգեւոր արժեքների, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու հայ ժողովրդի կյանքում նրա անխաթար առաքելության հանդեպ։

Ուխտերը, որին մասնակցում էին հազարավոր երիտասարդներ Հայ Եկեղեցու Հայաս-

րիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ «301 թվականին տեղի ունեցավ ազգային մեր կյանքում մեր ժողովրդի հավատքի առաջին հրաշքը՝ Հայաստանում քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն, եւ Լուսավորչի տեսիլքի համաձայն՝ այստեղ կառուցվեց Միածնաէջ սր տաճարը, որի հիման սր Սեղանի առջեւ ազգս հայոց՝ թագավոր, իշխան եւ ժողովուրդ, ուխտեցին սիրել Աստծուն՝ իրենց ամբողջ սրտով եւ ամբողջ հոգով, ուխտեցին լինել Աստծո հավատարիմ ժողովուրդ բոլոր ժամանակներում, բոլոր պաշտոնների մեջ եւ նաեւ ուխտեցին, որ ոչինչ չպիտի կարողանա խաթարել իրենց հավատը, որ իրենց հավատը պիտի լինի



կյանքում։ Այսօր էլ մենք տեսնում ենք հավատքի մի վկայություն՝ ի դեմս այստեղ հավաքված ուխտավոր հայրդյաց, որ վկայությունն է մեր ժողովրդի հոգեւոր վերագարթունքի»,- նշեց Վեհափառ Հայրապետն իր խոսքում։

Անդրադառնալով ուխտագրով հռչակված սիրո, հավատքի եւ հավատարմության գաղափարներին՝ Վեհափառ Հայրապետը հորդորեց երիտասարդներին, որ դրանք կյանքի կոչեն, արմատավորեն իրենց աստվածահաճ գործերում։ «...Եթե Զրիստոս չի ապրում մեր հոգիների մեջ, եթե Զրիստոս չի առաջնորդում մեզ, ո՞ր է կյանքը։ Զրիստոս Լույս է, եւ եթե Լույսը բնակություն հաստատի մեր հոգում, այնտեղ խավար եւ խավարի գործեր չեն կարող տեղ գտնել։ Զրիստոս սեր է, եթե այդ սերն արթնացնենք մեր հոգում, այնտեղ չեն կարող մտնել չար մտածումներ ու խորհուրդներ։ Մենք փառք ենք տալիս Աստծուն, որ այսօր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին անկախ պետականության պայմաններում իրականացնում է իր առաքելությունը ժողովրդի կյանքում»,- ասաց Նորին Սրբությունը։

Վեհափառ Հայրապետը խոսեց նաեւ հայ հասարակության կյանքում առկա բազում փորձությունների ու զայթակչությունների, ինչպես նաեւ այն երեւոյթների մասին, որ անհարիր են հայ ազգային կյանքում ընտանիքի կանոններին, խորթ մեր պատմությանը, քրիստոնեական մեր հավատքին, հոգեւոր մեր արժեքներին։ «Այս ամենը մենք պիտի կարողանանք հաղթահարել՝ ապավինելով մեր Տեր Աստծուն, այս ամենին պիտի կարողանանք դիմակայել՝ հավատարմությունը մեր

պահելով հանդեպ մեր Ս. Եկեղեցին։ Եշմարտություն է՝ եթե Աստված մեզ հետ է, ոչ ոք չի կարող մեզ հակառակ լինել։ Աստծո հետ մենք կերտել ենք հաղթանակները մեր ազգային կյանքի, Աստծո հետ մենք հաղթանակած ժողովուրդ ենք եղել։ Ուրեմն այս վստահությամբ ապավինենք մեր երկնավոր Տիրոջը, որպեսզի հաղթանակներ մշտապես ուղեկից լինեն մեր կյանքի բոլոր ճանապարհների ու բոլոր ընթացքների մեջ։ Մեր գործը հավատքն է, որ

արժանավոր զավակներն իրենց հայրերի, հոգիներում արթուն պահել քրիստոնեական հավատքը, Տիրոջ պատգամներն ու պատվիրանները ու տերունական սբ խաչի ներքո ապրել այդ արժեքներով, որպեսզի երկնքից շնորհներն առատորեն հեղվեն հայոց կյանքում, որպեսզի Տիրոջ ողորմությունն ու գթությունը միշտ լինեն հայոց ազգի հետ։

Վերջում իր հայրապետական գնահատանքը բերելով ուխտերի կազմակերպիչներին, ուխտերի իրականացմանն աջակցած թեմակալ առաջնորդներին ու հոգեւոր հովիվներին եւ ուխտավոր երիտասարդներին՝ Քարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուխտերի մասնակիցներին պատգամեց. «Մնացե՛ք մեր Եկեղեցու օրհնության ներքո, բաժնո՛ւկ պահե՛ք դեպի Եկեղեցի առաջնորդող ճանապարհները. այստեղ է, որ դուք պիտի հանդիպե՛ք մեր Տիրոջը՝ Հիսուս Զրիստոսին, այստեղ է, որ դուք պիտի գորանաք, այստեղ է, որ ձեր հոգին պիտի լցվի ուրախությամբ, այստեղ է, որ օրհնությունները պիտի իջնեն ձեր կյանքից ներս։

Հավատարի՛մ մնացե՛ք Ձեր ուխտի գաղափարներին, որ այսօր հռչակեցիք այստեղ՝ որպես սրբազան երդում, եւ այդ գաղափարներով՝ ապրե՛ք, լուսավորե՛ք ձեր կյանքը, գորացրե՛ք այդ արժեքներով հայոց հայրենիքը, որ-



տանի, Արցախի եւ Վրաստանի թեմերից, հասարակական կազմակերպություններից ու երիտասարդական միություններից, մեկնարկեց Երեւանի Ազատության հրապարակից, որտեղից ուխտավոր հայրդիները խաչերով, խաչվառներով ու ազգային-հոգեւոր արժեքների պահպանության կարգախոսներով քայլերով շարժվեցին դեպի Հանրապետության հրապարակ։ Մեկնելով Էջմիածին՝ ուխտերի բազմահազարանոց թափորը Ս. Հռիփսիմե վանքի մոտակայքից հոգեւորականների առաջնորդությամբ, հոգեւոր երգասացության ու թմբուկների դեպի Հանրապետության հրապարակ։ Մեկնելով Էջմիածին՝ ուխտերի բազմահազարանոց թափորը Ս. Հռիփսիմե վանքի մոտակայքից հոգեւորականների առաջնորդությամբ, հոգեւոր երգասացության ու թմբուկների դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր Ս. Տրդատի բաց խորանի առջեւ տեղի ունեցավ միասնական աղոթք։

Ուխտավորներին իր օրհնությունն ու հայրապետական պատգամը բերեց Ն. Ս. Օ. Ս. Տ. Քարեգին Բ Ծայրագույն Պատ-

գորեղ, պիտի լինի հաստատուն, հավատքով պիտի դիմակայեն չարի բոլոր փորձություններին։ Մեր ժողովրդի դէպքում հավատքը շարունակեց իր հրաշագործությունը, որովհետեւ ազգս հայոց եղավ մշտապես հավատարիմ իր Փրկչին՝ մեր Տեր Հիսուս Զրիստոսին, որի արդյունքում ստեղծվեցին հայոց այբուբենի տառերը՝ որպես անպարտելի գինվորներ, որպես երաշխավորներ մեր հոգեւոր արժեքների։ Եվ ապավինած հոգեւոր եւ ազգային այս արժեքներին՝ մենք քայլեցինք փոթորկալից դարերի միջով՝ դիմագրավելով բոլոր փորձություններին ու բոլոր զայթակչություններին։ Այդ հավատքով մենք հաղթեցինք Ավարայրը, հաղթեցինք Սարդարապատը, հաղթեցինք նաեւ Արցախում, այդ հավատքով մենք անկախ հռչակեցինք հայոց պետականությունը... Հավատքը շարունակաբար հրաշագործեց մեր ժողովրդի



պիտի մշտապես պայծառ պահվի մեր Ս. Եկեղեցում։ Մեր գործը հավատքն է եւ ամբողջական սերը, որ շեն պիտի պահեն Հայոց երկիրը, եւ այդ հավատքով ու սիրով մենք պիտի կարողանանք դիմակայել բոլոր դժվարություններին մեր կյանքի»,- շեշտեց Նորին Սրբությունն իր խոսքում։

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, խոսելով ազգային կյանքում հայ երիտասարդին վերապահված կարեւոր դերակատարության մասին, հորդորեց ուխտավոր հայրդիներին՝ լինել

պեսզի հայրենիքի խաղաղ երկնքի ներքո ապահով շարունակի ապրել եւ արարել ազգս հայոց»։

Հայրապետական օրհնության խոսքից հետո ուխտերի մասնակիցները Բաց խորանի առջեւ ծնրադիր երգեցին «Տեր ողորմեա»-ն, ապա «Զրիստոս ի մեջ մեր յայտնեցաւ» շարականի ներքո ողջագուրվեցին Զրիստոսի հայտնության ավետիսով։

Ուխտերն ավարտվեց Վեհափառ Հայրապետի Պահպանիչ աղոթքով եւ Հայրապետական մաղթերով։

Սկիզբը՝ էջ 2

Պետք է փոխադարձ հարգանք զարգացնենք միմյանց նկատմամբ՝ անկախ մեր պատկանելությունից... Սրանում եմ ես տեսնում այսօրվա հասարակության մեծագույն մարտահրավերը»,- իր խոսքում նշեց Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի գլխավոր քարտուղարը՝ կարեւոր նկատելով այս ամենում Եկեղեցիների սերտ համագործակցությունը։

Առաջին նիստին զեկույցներով հանդես եկան պրոֆ. Մարկո Վենետուրան (Լյուվենի Կաթոլիկ համալսարանի եկեղեցական իրավունքի ֆակուլտետ) եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական եւ պաշտոնական մամուլի բաժինների տնօրեն Շահե վրդ. Անանյանը։

Գիտաժողովը հոկտեմբերի 19-ին ավարտեց իր աշխատանքները։

Երկօրյա գիտաժողովի ընթացքում «Եկեղեցի եւ պետություն փոխհարաբերությունների տարբեր մոդելներն այսօր» թեմայի շուրջ բանախոսեցին Սերգեյ քնն.

«Եկեղեցի եւ պետություն փոխհարաբերություններ...»

Մատյուշինը (Ռուս Ուղղափառ Եկեղեցի) եւ Ասատուր Նահապետյանը (Երեւանի հայ ավետարանական-մկրտական քրիստոնյաների Եկեղեցի)։ «Կրոնական ազատության բնագավառում միջազգային օրենքներն ու չափորոշիչները» թեմայի շուրջ զեկույցներով հանդես եկան դոկտոր Պետեր Կրոմերը (Ավստրիայի Ավետարանական Եկեղեցու ղեկավար), մագ. Էլիզաբետա Կիտանովիչը (Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանս, Եկեղեցի եւ հասարակություն հանձնաժողովի մարդու իրավունքների գծով գործադիր քարտուղար), Եվրոպական կառույցներում Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ հայր Նեկտարիոս Իոաննիս եւ Խոսե Լուիս Բազան (միգրացիայի գծով իրավական խորհրդատու, Կաթոլիկ եպիսկոպոսների Եվրոպական հանձնաժողով)։

«Եկեղեցի եւ պետություն փոխհարաբերությունները Հայաստանում. հնարա-

վորություններ եւ մարտահրավերներ» խորագրով չորրորդ նիստն սկսվեց ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գրիգոր Մուրադյանի զեկույցով։ Այնուհետեւ բանախոսություններով հանդես եկան նաեւ դոկտոր Թոմաս Սամուելյանը (Հայաստանում Ամերիկյան համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ղեկան), Արտակ Չաքարյանը (ՀՀ Աժարտաքին հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ) եւ Տիգրան Մեսրոպյանը (ՀՀ կառավարման ակադեմիա, քաղաքագետ)։

Գիտաժողովի եզրափակիչ նիստի ընթացքում տեղի ունեցավ քննարկում «Եկեղեցու դերը ՀՀ հասարակական կյանքում. մարտահրավերներ եւ հեռանկարներ» թեմայի շուրջ։ Թեմայի քննարկման շրջանակներում անդրադարձ կատարվեց կրոնական փոքրամասնությունների հետ հարաբերություններին, համատեղ ջանքերով

փորձառությունների, մոտեցումների եւ տեսակետների փոխանակման անհրաժեշտությանը, ինչպես նաեւ Մայր Եկեղեցու իրավունքները ոտնահարող գործընթացների կանխարգելմանը վերաբերող հարցերին։

Գիտաժողովի ավարտին Հովակիմ եպս Մանուկյանը երախտագիտություն հայտնեց ներկաներին՝ գիտաժողովին մասնակցության համար՝ ընդգծելով, որ նման միջոցառումները համատեղ փորձի փոխանակման միջոցով առավել պիտի նպաստեն երկխոսությունների զորացմանը։ Դրական գնահատելով եւ ամփոփելով երկօրյա գիտաժողովի արդյունքները՝ մասնակիցները կարեւորեցին նման գիտաժողովների գումարման շարունակական լինելը։

Լրատվական կյուբերը՝ ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՐԵԿԱՏԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ԿԻՑ սեռյակում

- Տե՛ր հայր, սուրբ Գր. Տաթևացին ասում է, որ Աստծու կամքը մեղավորների դարձն է եւ հոգիների փրկությունը... Ինչպե՞ս հասկանալ:

- Սբ Հովհաննես ավետարանիչն ասում է. «Աստված սեր է»: Տեր Հիսուս Զրիստոսը՝ Աստծո Միածին Որդին, որ Իր սիրուց մղված՝ մարդ դարձավ եւ մարդու փոխարեն Իր անձը զոհեց հոժարեց, ասում է, որ Աստված մեղավորի մահը չի կամենում, այլ՝ Նրա դառնալը չար ճանապարհից եւ ապրելը: Իր աստվածային սիրով կամենում է յուրաքանչյուրիս բարեկեցությունը, երջանկությունը, որովհետեւ մեր կյանքը մեղքով վարակված է: Ուստի Աստված անհրաժեշտաբար Իր Միածին Որդուն աշխարհի ուղարկեց, որպեսզի բոլոր Նրանք, ովքեր իրենց փրկությունն են կամենում, կարողանան ընդունել Զրիստոսին, լուսավորվել Սուրբ Հոգով եւ փրկվել:

- Բոլոր աղոթքների դուռը հանդիսացող Տերունական աղոթքում եւս Տերը պատվիրեց Իր կամքը խնդրել՝ ասելով. «Զո կամքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է»: Եվ թեեւ մեզնից շատերի շուրթերից գրեթե ամեն օր հնչում են այս խոսքերը, սակայն մեր բազմազբաղ առօրյայում յուրաքանչյուրս գործում ենք Աստծո կամքին հակառակ գործեր, որովհետեւ մեր կամքը նախապատիվ ենք համարում աստվածային սուրբ կամքից: Ի՞նչ ասել է հնազանդվել աստվածային սուրբ կամքին:

- Շատ կարեւոր հանգամանք կա. Սբ Գիրքն ի սկզբանե պատվիրում է մեզ. «Պատվիր քո հորն ու մորը, որպեսզի երկար կյանք ունենաս»: Մինչդեռ մեր Տեր Հիսուս Զրիստոսն ասում է. «Դուք աղոթեցեք այսպես. «Հայ՛ր մեր, որ երկնքում ես»: Սա կարեւոր բնորոշում է մեր եւ Աստծո բարեկամության: Զանի որ Աստված մեր Հայրն է, ուստի եւ մեր Ծնողն է, բնականաբար մենք պետք է ցանկանանք Նրա կամքը կատարել: Աստծո պատվիրանն է Նրա կամքը: Զանի որ մենք հասկանում ենք, որ Աստված «Հինավուրցն է», ինչպես ասում է Դանիել մարգարեն իր գրքում, Ամենամեծն է, գիտի, թե ինչ է մեզ անհրաժեշտ, ուստի Նրա պատվիրանը Նրա համար է, որ այն կատարելով՝ ապրենք: Սբ Պողոս առաքյալն ասում է. «Աստծու կամքը բարի, հաճելի եւ կատարյալ է»: Աստվածաշնչում արձանագրված ամեն ինչ

ԵՂԻՇԻՆ ԿԱՄՔ ՔՈ

Մեր հյուրն է Սմբատ ֆհն. Սարգսյանը



բարի է եւ մեր փրկությանն է նպաստում եւ կատարյալ է, որովհետեւ մեզ մեր երկնավոր Հոր պես կատարյալ է դարձնում: Մեր կամքը չգերադասենք աստվածային կամքից, միշտ բարին ցանկանանք, որպեսզի հակված լինենք Աստծո պատվիրանը պահելուն:

- Ձեր խոսքից կարելի է եզրակացնել, որ պահելով սուրբգրային պատվիրանները՝ արդեն իսկ հնազանդվում ենք աստվածային կամքին:

- Այո՛, քանի որ Աստված մեղավորի մահը չի կամենում, այլ՝ Նրա դառնալը չար ճանապարհից եւ ապրելը, ուստի եւ Նրա բոլոր պատվիրանները նպաստելու են մեր փրկությանը: Եթե մարդն իր կյանքի թեկուզ մեկ օրվա ընթացքում փորձի բարին գործել, ապա իր գլուխը խաղաղությամբ բարձին կդնի, քանի որ սրտում չի ունենա զոքում, ափսոսանք եւ տագնապ՝ գործած հանցանքի համար: Ուստի Աստծո պատվիրանները մեր փրկության համար են, որոնք եթե պահենք, խաղաղություն կունենանք մեր սրտերի մեջ:

- Սբ Գիրքը լի է աստվածային կամքին հնազանդվելու բազում փաստերով: Հիշենք Աբրահամին, թե ինչպես նա աներկբայորեն հնազանդվեց Աստծուն՝ զոհաբերության տանելով իր միակ որդուն: Հիշենք Զրիստոսին. Նա ողջ մարդկությանն օրինակ եղավ՝ Հոր կամքին ցուցաբերած

Իր հնազանդությամբ: Նա խոնարհվեց մինչեւ խաչի անարգ մահ, քանզի դրա համար իսկ մարդացել եւ աշխարհ էր եկել:

- Սբ հայրերը սովորեցնում են, որ երկինքն ու երկիրն Աստված արարեց մարդու համար՝ Իր սիրուց դրդված, որպեսզի այն ամենը, ինչ Իրենն է, մարդուն տալ կարողանա: Մարդը հեռացավ Աստծուց, սակայն Աստված առավել մերձեցավ մարդուն: Իսաիական խորհրդանշան է Տեր Հիսուս Զրիստոսի: Եվ այն լեռը, որտեղ Աբրահամն իր զավակին բարձրացրեց, Սիոն լեռն է, Հոգեգրան, որտեղ եւ Հիսուս Զրիստոսը խաչի վրա զոհաբերվեց: Աբրահամը եղավ երկնավոր Հոր խորհրդանշանը, որովհետեւ հոժարեց իր միածին որդուն զոհաբերել Աստծու կամքի համար, ինչպես որ երկնավոր Հայրն Իր Միածին Որդուն զոհաբերեց Աբրահամի եւ Նրա սերնդի համար: Այս մեծ խորհրդաբանությունը կա սրա մեջ: Աստված անչափ մարդասեր է: Զրիստոսյա լինել նշանակում է Զրիստոսին նմանվել, Նրա անձնագոհությամբ ոգեշնչվել, որովհետեւ կատարյալ սերն անձնագոհության մեջ է:

- Իսկ ինչպե՞ս է դրսևորվում այդ անձնագոհությունը պարզ մարդկային փոխհարաբերություններում:

- Մենք հաճախ մեր ընտանիքում ավելի լարված ենք, քան փողոցում: Օտար

մարդու հետ կարող ենք խոսել համբերատար մեղմ կերպով, սակայն երբեմն մեր ընտանիքի անդամի խոսքը տանել չենք կարողանում: Սա խոսում է մեր մեղանչական բնության մասին: Մենք չենք կարողանում իսկապես բարին խորհել անգամ, ուր մնաց խոսել կամ գործել: Ինչո՞ւ Զրիստոսն Իր անձը զոհեց մեզ համար. որովհետեւ մենք բարու ընդունակ չէինք, հիվանդ էինք: Մեր բժիշկը Զրիստոսն է: Անձնագոհությունը հասկանալու համար Զրիստոսի հետ հաղորդության մեջ պետք է լինենք, Նրան մեր մեջ ունենանք եւ Նրանով մեր փրկությունը գտնենք: Հաճախ թե՛ մեր հայրենիքը, թե՛ մեր ընտանիքը, ազգը, յուրաքանչյուր մարդ մեր անձնագոհության, մեր մշտական հոգաձության կարիքն ունի, որովհետեւ եթե քո անձը չնեղես, բարին գործել չես կարող: Եթե հարազատդ հիվանդ է, եւ դու գիշերը հոգևած, քնած ես, մի՞թե չես արթնանա՝ Նրան օգնություն ցույց տալու համար: Սա անձնագոհություն չէ՞: Մենք բոլորս փրկության կարիք ունենք, եւ Աստված, Իր աստվածային փառքը թողնելով երկնքում, խոնարհվեց եւ մարդ դարձավ, Իր անձնունայնացրեց մինչեւ խաչի անարգ մահ, մեզ համար ցավեր կրեց, որպեսզի մենք փրկության արժանանանք:

- Տե՛ր հայր, կյանքում հաճախ, հատկապես երբ ընտրության առջեւ ենք կանգնած լինում, դժվարանում ենք կողմնորոշվել՝ ո՞րն է Աստծու կամքը, ինչպե՞ս հասկանալ այն: Ի՞նչ անել՝ չսխալվելու համար:

- Տեր Հիսուս Զրիստոսն ասում է. «Ես եմ ճանապարհը եւ ճշմարտությունը եւ Կյանքը»: Առանց Զրիստոսի չենք կարող ճշմարտությունն իրագործել կյանքում, ճիշտ ապրել, դրա համար սբ Պողոս առաքյալն ասում է, որ Զրիստոսն է մեր հավատի Առաջնորդը: Իսկ Տերն ասում է. «Սովորեցեք Ինձնից, որ հեզ եմ եւ սրտով խոնարհ»: Զրիստոսից սովորել, Նրան նմանվել նշանակում է լինել կատարյալ: Անտոն Անապատականն ասում է. «Որքե՞ն բան անելուց առաջ վկայություն ունեցիր Սբ Գրքից: Հաճախ մեզ թվում է, որ մեր կամեցածի մեջ որեւէ վատ բան չկա, օրինակ՝ հիվանդը կամենում է առողջանալ, բայց կարելու է այդ ամենին Զրիստոսի աջով նայելը: Զանի որ Զրիստոսը հարուստի առավ մեռելներից, ապա կենդանի է եւ մեր մեջ է, ինչը նշանակում է, որ մենք Զրիստոսի հետ հաղորդությամբ կարող ենք իսկապես հասու լինել ճշմարտությանը, Աստծու կամքին:

Շարունակությունը՝ էջ 8



Սկիզբը՝ էջ 4

«Հայկական էսքիզների» ստեղծագործական ուղղվածությունը բնորոշ է նաեւ Պետրոսյանի «Կարսից մինչեւ Տրոյայի ավերակները», «Մի կտոր Հայաստան», «Տուն՝ մեր ջնկված զավակների համար» ուղեգրություններին, «Ոչ միայն հացիվ», «Եվ մի օր ձեր զավակները կհարցնեն. «Որտեղ է մեր տունը», «Դու պիտի գաս Հայաստան» հրապարակագրական հոդվածներին:

Հեղափոխության տարիների կյանքն արտացոլվեց Հ. Մկրտչյանի «Անհայտ գինվորի հիշատակարանը» (հ. 1, 1966, հ. 2, 1973, հ. 3, 1975), Վ. Հարությունյանի «Վայոց ձոր» (հ. 1, 1970, հ. 2, 1974), Մ. Շաթիրյանի «Այց արմավենու մասին» (1967), «Հեղափոխության գեներալը»

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

(1978), Ս. Այվազյանի «Խնձորեսկ» (1982), Զ. Դարյանի «Զառուդիններ» (հ. 1, 1981, հ. 2, 1982) վեպերում: Թե՛ քանակական առումով եւ թե՛ որակական՝ պատմահեղափոխական արձակը դեռեւս հեռու է այդ բնագավառին ներկայացվող պահանջները բավարարելուց: Անհաջողության մատուցվեցին թե՛ Հ. Մկրտչյանը, թե՛ Վ. Հարությունյանը, թե՛ Զ. Դարյանը, որովհետեւ չկարողացան հոգեբանորեն հիմնավորել իրենց հերոսների վարքագիծը, որոնք գործում են քաղաքական բարդ պայմաններում, երբ հաղթանակել էր հեղափոխությունը, եւ հայ ժողովուրդը ծանր կորուստներից հետո բռնել ազգային վերակազմավորման մի նոր ճանապարհ:

Համեմատաբար հաջող են Մ. Շաթիրյանի նշված երկու վեպերը, որոնցից առաջինում պատմվում է Բաքվի կոմունայի մասին՝ գլխավոր հերոս ունենալով Ստեփան Շահումյանին, իսկ երկրորդն արտացոլում է Ալեքսանդր Մյասնիկյանի կյանքն ու գործունեությունը: Հեղափոխության համար իրենց ամբողջ կյանքն ու եռանդը ներդրած եւ ողբերգաբար զոհված գործիչներ, որոնք ճակատագրական կերպարով գրական ներշնչումների է մղել շատե-

րին: Առաջին վեպում դեպքերը կատարվում են 1918, երկրորդում՝ 1917 թվականներին՝ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի եւ դրան հաջորդող ծանր ու դժվարին օրերին:

Ո՞րն է Շաթիրյանի վեպերի հաջողության գրավականը: Նախ՝ նա ըստ ամենայնի փորձել է հավատարիմ մնալ պատմական դեպքերի տրամաբանությանը, պահպանել ժամանակի քաղաքական իրադրության ներքին բարդությունը եւ ոչ թե պարզեցնելով՝ հեշտացնել նաեւ հերոսների գործունեությունը: Այսինքն՝ գեղարվեստականության նա հասել է պատմականության ճանապարհով՝ դեպքերի արագ ու հաջորդական ընթացքին տալով ներքին պատմաքաղաքական եւ հոգեբանական հիմնավորում: Փաստականությունը վիպական հյուսվածքի մեջ է ներմուծել շատ պատմական դեմքերի՝ հեղափոխության դեկավարից, որի գիտակիցներն էին Շահումյանն ու Մյասնիկյանը, մինչեւ Կորգանով, Զափարիձե, անգլիական հյուպատոս Մակ-Դոննել եւ ուրիշներ: Պահպանված է նաեւ ժամանակի ընդհանուր մթնոլորտը, որն ստեղծել էր հեղափոխության շունչը եւ մեծ իրագործումների երազանքը:

Խնձորեսկ գյուղի բազմադարյա պատմության դրվագներից, մարդկանց կենցաղի ու սովորությունների նկարագրություններից է հյուսված Ս. Այվազյանի «Խնձորեսկ» վեպը, որի մեջ պատկերված է խորհրդային կարգերի հաստատման եւ նոր կյանքի հիմնադրման դժվարին ընթացքը: Վեպի հաջողության գրավականն այս դեպքում պայմանավորված է ժողովրդական կյանքի կենդանի հորձանքը պահպանելու, բնաշխարհի մարդկանց բնութագրական նկարագրի, խոսք ու գրույցի մեջ պատկերելու հմտությամբ:

Այսուհանդերձ՝ պատմահեղափոխական արձանն ունի չբացահայտված շերտեր, իսկ որ ամենակարեւորն է՝ պիտի վերջնականապես կարողանա հաղթահարել զաղափարական սխեմաները, որպեսզի ավելի կենդանի գծերով երեւան մարդն ու ժամանակը: Փաստից՝ գեղարվեստ, պատմությունից գրականություն անցումով է պայմանավորված այս նյութի կարեւորությունը:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԱԹ-ԹԱՆԱՀԻ

Սկիզբը՝ թիվ 9-12, 14-15, 17, 19

Ահա թե ինձ ինչ պատմեց Աբու-Լ-Քասիմ իբն Մարուֆը.

«Ես գնացի Դալեթ՝ հարգանքս հավաստիքը տալու Աբու Մուհամմադ աս-Սալախի եւ Աբու-Լ-Ֆասան ալ-Մահրիբի գրագիրներին, որոնք ծառայում էին Սայֆ ադ-Դաուլեային: Տների գերբնակեցված լինելու պատճառով նրանք ապրում էին մեկ տան մեջ, եւ յուրաքանչյուրն իր կառավարիչն ուներ: Առավոտները նրանք հերթով բերում էին բոլոր անհրաժեշտ բաները՝ իրենց եւ իրենց ծառաների համար:

Երբ ես հարմար տեղավորվեցի, մի կույր մարդ մտավ եւ ողջունելով ասաց. «Իմ հարաբերություններն Էմիրի հետ վաղեմի են: Մենք հարեւանությամբ էինք ապրում եւ ծանոթացել ենք դեռ այն օրերին, երբ Էմիրն ապրում էր Մոսուլում: Այժմ ես խնդրագիր եմ բերել, դուք այնքան բարի չե՞ք լինի եւ չե՞ք փոխանցի այն Սայֆ ադ-Դաուլեային»: Եվ նա հանեց ականառու չափսի գրությունը:

Դա տեսնելով՝ նրանք ասացին. «Այդ խնդրագիրը չափազանց երկար է. Էմիրը դա չի կարդա: Ավելի լավ է՝ դու կրճատես ու բերես ուրիշ անգամ, այն ժամանակ մենք դա կընդունենք ու կհանձնենք Սայֆ ադ-Դաուլեային»: Նա ասաց. «Իմ ցանկությունն այն է, որ դուք սիրալիրություն ցուցաբերեք ինձ եւ դիմումը հանձնեք»:

Նրանք աշխատում էին համոզել նրան, եւ նա շուտով վեր կացավ ու գնաց՝ հազիվ շարժելով ոտքերը՝ որպես հուսահատության հասցված մարդ: Ես խղճացի նրան եւ գնացի Սայֆ ադ-Դաուլեայի մոտ: Իսկ նա այսպիսի կարգ էր սահմանել. նրա մոտ մարդ չէին թողնում՝ առանց հաջիբի գրության, որի մեջ նշվում էր այցելուի անունը: Էմիրը կար-

դում էր անունը եւ վճռում՝ ընդունում է այդ մարդուն, թե՞ հրահանգում է վռնդել:

Երբ ես զբաղեցրի իմ տեղը, հաջիբը նրան թուղթ բերեց այսինչի՝ մոսուլցի կույրի անունով: Ընթերցելով այն՝ Էմիրն ասաց. «Մի՞թե այս մարդը ողջ է: Որտե՞ղ է նա»: «Զու դժան տակ», - պատասխանեցին նրան: Էմիրն ասաց. «Թող ներս գա, ես հո գիտեմ՝ նա չի սիրում խնդրանքով դիմել, եթե եկել է, ուրեմն դրա համար լուրջ պատճառներ կան»:

Մարդը մտավ. դա նույն այն շեյխն էր, որին ես տեսել էի աս-Սալախի ու ալ-Մահրիբի մոտ: Էմիրը նրան առաջարկեց ավելի մոտենալ եւ նայելով նրան ուրախ ժպտով՝ ասաց. «Բարեկամս, դու ի՞նչ է, չե՞ս լսել, որ մենք կանք երկրի վրա, եւ չգիտե՞իր՝ որտեղ ենք մենք գտնվում: Դու մի՞թե չէիր կարող գալ մեզ մոտ: Չէ՞ որ մեզ կապում են այնքան հաստատուն կապեր: Դու վիրավորել ես ինքդ քեզ եւ սխալ ես մտածել մեր մասին»:

Այնժամ այդ մարդն սկսեց օրհնել Էմիրին՝ շնորհակալություն հայտնելով եւ ներողություն հայցելով, իսկ Էմիրը նրան առաջարկեց նստել իր կողքին: Նա մի քիչ նստեց, հետո վեր կացավ ու Էմիրին հանձնեց այն նույն դիմումը, որ ցույց էր տվել մեզ:

Էմիրը վերցրեց ու կարդաց մինչեւ վերջ, իսկ հետո կանչեց իր գանձապետ Եանուս իբն Բաբային: Երբ սա եկավ, Էմիրն ինչ-որ կարգադրություններ արեց, հետո կանչեց գլխավոր հանդերձապահին ու նրան եւս հրամայեց ինչ-որ բան: Նրանք գնացին, եւ շուտով իբն Բաբան վերադարձավ եւ կույրի առջեւ դրեց երկու հսկա քսակ, որոնց մեջ հինգ հարյուրից ավելի դիներ կար: Հետո եկավ հանդերձապահը եւ բերեց ձմեռային ու ամառային շատ լավ հագուստներ՝ օծանելիքով հագե-

ցած, ու նաեւ տան համար պիտանի ամեն տեսակի իրեր՝ հայելի եւ այլն: Սրանցից հետո հայտնվեց ծառան: Նա բերեց գորգեր, դիպակե ծածկոցներ, Սաբանից բերված իրեր եւ զանազան թիկնոցներ՝ հազարավոր դիներ արժողությամբ: Այդ ամենը դարսեցին նրա առջեւ:

Երբ Սայֆ ադ-Դաուլեան կարգադրում էր որեւէ մեկին ինչ-որ բան նվիրել, սիրում էր, որ ընծաները տրվեին իր ներկայությամբ՝ իր աչքի առաջ, որպեսզի անձամբ կարողանար հանձնել նրան, ում նախատեսված են: Այդ ամենը բերին, իսկ կույրը ոչինչ չգիտեր եւ կարծում էր, թե Էմիրն ուշադրության առավ իրեն ու անցավ, ինչպես սովորական այցելուի: Իսկ Էմիրը նրան բան չասաց:

Հետո եկավ ձիապանը, բերեց երեք հազար դրոհեմ արծող ջորի՝ ծանր ու գեղեցիկ թամբով: Նրան հետեւում էր մի ծառա, որ բերում էր մի այլ ծառայի՝ նոր հագուստով: Նրան հանձնեցին ջորին, եւ սա կենդանուն կանգնեցրեց բարձունքի մոտ, որի վրա Սայֆ ադ-Դաուլեայի գահն էր: Ապա Էմիրը ծառային հարցրեց՝ ամսական ինչ է ստացել: Նա պատասխանեց. «Ամիսը՝ քսան դիներ»: Էմիրն ասաց. «Ես քեզ նշանակում եմ ամսական երեսուկն դիներ եւ հանձնարարում եմ ծառայել այս շեյխին, իսկ դու պարտականություններդ կատարիր, ինչպես հարկն է՝ առանց ալարելու՝ ասես ինձ ես ծառայում: Նրան տվեք ամբողջ տարվա աշխատավարձը»: Եվ անմիջապես վճարեցին ամբողջը:

Էմիրն ասաց. «Ինձ համար ազատեցեք այսինչ տունը»: Նրա ծառաներն իսկույն կարգադրեցին ազատել մի տուն: Դրանից հետո Էմիրը հրահանգեց նավակ տանել Թալըլ Ֆաֆանից Մոսուլ՝ այդ մարդու ընտանիքին՝ մեծը



տեղավորելով երկու կույրը ցորեն, մեկ կույրը գարի եւ սիրիական բանջարեղենի ու մթերքի պաշար: Երբ այդ կարգադրությունները կատարվեցին, Էմիրը կանչեց Աբու Իսհակ իբն Շահրամին, որը հայտնի էր «Չալում երգչուհու որդի» անունով եւ որը նրա գրագիրն էր ու նվիրակը բյուզանդական կայսեր մոտ, եւ որին նա հանձնարարում էր ամեն տեսակի գործեր՝ մեծ ու փոքր: Էմիրը նրան ինչ-որ բան շնչաց, եւ Աբու Իսհակը շեյխի ձեռքից բռնեց եւ նրան դիմեց ընդարձակ ներողությամբ Սայֆ ադ-Դաուլեայի անունից՝ ասելով. «Դու մեզ մոտ ես եկել հենց տարեվերջին, երբ մեր գանձարանը դատարկ է, որովհետեւ բաժանել ենք տարբեր խնդրարկուների ու այցելուների, նաեւ զորքին, բացի այդ՝ շատ բարձրապաշտոն մարդիկ սպասում են մեր դարպասի մոտ, նրանց նույնպես հարկավոր է բավարարել: Եթե չլինեք այս ամենը, մենք կարողարացնեինք քո հույսերը, իսկ այժմ կարողացանք կարգադրել՝ քեզ տալ միայն այս»: Եվ իբն Շահրամը կարդաց ցանկը, ուր թվարկված էին բոլոր ընծաները, հագուստը, զարդերը եւ այլն:

Ես Էմիրին ասացի. «Տե՛ր իմ, նրան մի՛ որոշիր քո առատածեռ-

նությամբ անմիջապես այն բանից հետո, երբ հուսահատությունն էր տիրել նրան, թե չէ լեղապարկը կպայթի»: Իսկ շեյխը, լսելով իբն Շահրամի խոսքը, շանթահար հեծկլտոցով ասաց. «Ո՛վ Էմիր, դու փոքր-ինչ գերազանցեցիր իմ սպասելիքները, դու ոչ միայն լիովին վարձատրեցիր ինձ, այլեւ դրանից ավելի շատ, եւ ես խոսք չունեմ, որ արտահայտեմ երախտագիտությունս: Բայց ալլահն իմ պատճառով քեզ կհատուցի, իսկ այժմ հաճիր թույլ տալ համբուրել ձեռքդ, եւ դա կլինի նվերներից լավագույնը»:

Սայֆ ադ-Դաուլեայից արտոնվելով՝ շեյխը մոտեցավ նրան եւ ձեռքը համբուրեց շատ անգամ: Դրանից հետո Սայֆ ադ-Դաուլեան այդ կույրին մոտեցրեց իրեն ու ինչ-որ հարցով խորհրդակցեց, եւ շեյխը ծիծաղեց ու երկու անգամ ասաց. «Այո՛, երդվում եմ ալլահով, Էմիր՝: Այնժամ Էմիրը կանչեց ներքինիին, որ հսկում էր նրա հարեմը, եւ նրան ինչ-որ բան շնչաց: Իսկ շեյխը գնաց իրեն հատկացված տունը, ուր Էմիրի հրահանգով նա ապրելու էր, մինչեւ Էմիրը կկարգավորեր նրա գործերը, եւ այն ժամանակ շեյխը կկարողանար դառնալ իր ընտանիքին:

Շարունակությունը՝ էջ 8

Մայիլ Աուլեն Կրստեւ եւ նրա գրական գործունեությունը

Սկիզբը՝ էջ 5

Ցավոք, երբեմն այդ բացասական միտումը դրսևորում են ոչ միայն շարքային մահկանացուները, այլեւ Առլեն Ավագ Նման կարկառուն մտավորականները, որոնց իրական առաքելությունը, թերեւս, այն է, որ նրանք պետք է առավել օբյեկտիվ լինեն, հնարավորինս գերծ ման ծայրահեղություններից, ճշմարիտ ուղիով առաջնորդեն իրենց ժողովրդին ու միեւնույն ժամանակ դրական տպավորություն ստեղծեն օտարների մոտ հայության մասին: Իսկ ի՞նչ է անում Ավագ Առլենը. նա բարդությամբ փորձում է իր առանց այն էլ բարդությամբ փորձված ազգին: Ավելորդ է խոսել այն մասին, որ նա իր ազգին շատ անբարենպաստ ձեռով է ներկայացնում աշխարհին: Ցանկացած օտարազգի ընթերցող, կարդալով Առլենի տողերը, ակամայից կմտածի. եթե տաղանդավոր հայ մտավորական իր ազգին նման բացասական գնահատականներ է տալիս, ուրեմն դրանցում, անշուշտ, ճշմարտություն կա: Առլեն Ավագը կա՛մ չի գիտակցել այս պարզ իրողությունը, կա՛մ էլ չգիտի, թե ազգասիրությունն ինչ բան է: Սակայն եկեք խնդրին այլ տեսան-

կյունից մոտենանք: Ի՞նչ վատ բան կա, առհասարակ, ճշմարտությունն ասելու մեջ: Ո՛ւմ է պետք այն արվեստը՝ մասնավորապես գեղարվեստական գրականությունը, որն իր բնույթով շինծու է՝ լի ստով եւ կեղծիքով: Այդպիսի գրականություն ժամանակին ստեղծվել էր Խորհրդային Միությունում, որը ծառայում էր ոչ այնքան ճշմարտությանը, որքան խորհրդային վարչակարգին: Նման գրականության բուն նպատակն է խնամքով թաքցնել կյանքի զագրելի կողմերը, քողարկել հասարակության արատները: Թերեւս պարզից էլ պարզ է, որ ոչ մի ճշմարիտ արվեստագետ չի ընտրի կեղծիքի ուղին եւ կասի այն, ինչն իր սուբյեկտիվ կարծիքով ճշմարիտ է եւ բարոյական տեսանկյունից՝ արդարացված: Եվ պատահական չէ, որ տարբեր դարաշրջաններում ապրած բազմաթիվ շնորհալի մտավորականներ գերադասել են իրենց կյանքը դնել ճշմարտության զոհասեղանին, բայց դեմ չգնալ իրենց սկզբունքներին եւ մարդկային խղճին: Գուցե եւ Առլեն Ավագը հենց այդ ազնիվ եւ սկզբունքային մտավորականներից է: Անշուշտ, յուրաքանչյուր ընթերցող իրա-



վունք ունի յուրովի պատասխանելու վերը ներկայացված հարցերին: Եթե խոսքը վերաբերում է մեր կարծիքին, ապա ասենք, որ սփյուռքահայ գրողի ասածների մեջ, անկասկած, դառն ճշմարտության մասնաբաժին կա, սակայն նա, հանդիսանալով հայ ազգի մի մասնիկը, թերեւս բարոյական իրավունք չունի հանդես գալու նման խարազանող խոսքերով: Եվ բնավ պատահական չէ, որ հայր Առլենն իր ծայրահեղական եւ ապագային զաղափարների պատճառով ժամանակին

արժանացել էր հայ մեծ՝ պետական, ռազմական գործիչ եւ իմաստասեր Գարեգին Նժդեհի հանդիմանությանը: Ինչեւէ, շարունակենք լուսաբանել սփյուռքահայ գրողի խոհերը հարազատ ազգի, նրա պատմական անցյալի, ցեղասպանության եւ դրա հետեւանքների մասին: Առլենի ներկայացմամբ եղեռնը ոչ միայն գրեթե ոչնչացրեց մի ամբողջ ժողովրդի, այլեւ առաջացրեց խմբային արձագանքներ: Ինքնախղճահարությունը, ատելությունը եւ մոլեռանդ պառակտվածությունը լցրեցին այն դատարկությունը, որն անխուսափելիորեն առաջացել էր հայոց Մեծ եղեռնի հետեւանքով: Առլենի սառը դիտարկումն այն մասին, որ աշխարհն անտարբեր է փոքր, զոհ դարձած երկրների ճակատագրերի նկատմամբ քանի դեռ դրանք ռազմավարական կարեւորություն չունեն գերտերությունների համար, էլ ավելի ողբալի է: Այսպիսով՝ ցեղասպանությունից մազապուրծ փրկված տասնյակ հազարավոր հայեր եւ նրանց ժառանգներն իրենց զգում են անպետքի կարգավիճակում: Նրանք հաճախ այնպիսի ծանր զգացողություն են ունենում, կարծես իրենք ավելորդ բեռ են աշ-

խարհի եւ մարդկության համար: Այս ցավալի ու միեւնույն ժամանակ կործանարար հոգեվիճակի եւ տրամադրվածության մասին են բարձրաձայնել բազմաթիվ սփյուռքահայ գրողներ՝ մասնավորապես Փիթեր Նաջարյանն իր «Ուղեւորություններ» վեպում: Այստեղ ավելորդ չենք համարում մի փոքր պարզաբանում տալ՝ կապված հայ ժողովրդին տոգորած զգացողությունների հետ: Բանն այն է, որ ոչ մի ազգի չեն սիրում եւ չեն հարգում հենց այնպես՝ առանց լուրջ պատճառների: Ոչ մի ազգի հետ հաշվի չեն նստում՝ առանց օբյեկտիվ նախադրյալների: Որեւէ Թեոսոփի հետ, որպես կանոն, հաշվի են նստում այն ժամանակ, երբ նա կարողանում է աշխարհին ապացուցել իր առավելություններն այլ ազգերի նկատմամբ: Այդպես է, օրինակ, հրեաների պարագայում. հրեաներն իրենց իմաստության, եթե չասենք բնատուր խորամանկության, ինչպես նաեւ համախմբվածության շնորհիվ կարողացել են նվաճել աշխարհը, իհարկե՝ ոչ բառիս բուն իմաստով: Պարզապես նրանց հաջողվել է իրենց ձեռքերում կենտրոնացնել տարբեր երկրների հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտները (կրթություն, գիտություն, արվեստ, առեւտուր, արդյունաբերություն եւ այլն):

Շարունակությունը՝ էջ 8

ԿԻՑ սեռական

Սկիզբը՝ էջ 6


Եթե որեւէ մէկն Աստծու հետ հաղորդակից լինի, կլցվի իմաստությամբ եւ կհասկանա կյանքի իմաստը: Պողոս առաքյալն աստվածութեան մասին իր անձը տեսավ, որովհետեւ Աստված Լույս է, որքան մոտենում ես Աստծուն, այնքան տեսնում ես ինքը քեզ, քո թերությունները: Մեր կյանքի բուն ճշմարտությունը հասկանալու լույսի ներքո է հնարավոր հասկանալ, թե որն է Աստծու կամքը մանր հանգամանքներում, առարկայական հարցերի մեջ: Պարզ օրինակ բերեմ. մի անգամ մեկն ինձ հարցրեց, թե ինչպէս եմ: Ասացի. «Հիվանդ եմ, փա՛ռք Աստծո՛ւ»: Որովհետեւ քանի դեռ հիվանդ եմ, մտածում եմ առողջանալու մասին, իսկ երբ առողջ եմ, ինչ ասես մտածում եմ, եւ այդ մտքերը կարող են ինձ վնասել: Հիվանդության ժամանակ պետք է փառք տալ Աստծուն, քանի որ հիվանդությունը նպաստում է մեր իմաստնացումին:

- Փաստորեն՝ հիվանդությունը, նեղությունները, կյանքում հանդիպող տարատեսակ փորձությունները նույնպէս կարող են մեզ այցելել Աստծու թույլատու կամքով: Այո՞:

- Այո՛, իհարկե, քանի որ հաճախ մարդիկ ինչ-որ դժբախտության մեջ չարանում են Աստծու դեմ՝ մտածելով, որ Աստված կարող էր փրկել, բայց չփրկեց փորձանք:

ԵՂԻՇԻՆ ԿԱՄՔ ՔՈ

Մեր հյուրն է Սմբատ փն. Սարգսյանը



քից: Աստված կարող էր, բայց մենք կամենում էինք բարին: Սա շատ կարեւոր հանգամանք է: Նեղություններն ու դժվարությունները չեն կարող որպէս բացարձակ թշնամություն Աստծու կողմից մեր նկատմամբ, այլ՝ որպէս բարերար բժշկություն մեր կյանքը նորոգելու եւ կազդուրելու համար: Նրանք, ովքեր լուսավորված են աստվածգիտությամբ, վստահում են Աստ-

ծուն, բարին կատարելու հոժարությունն ունեն եւ հոժարությամբ ընդունում են Աստծու կամքը: Հիշեցի այն հիվանդ տղային, որի հայրն իրեն ասում էր. «Երանի՛ր թե ես լինեի քո փոխարեն հիվանդ»: Տղան հորն ասում է. «Մի փնտրիր այն, ինչ քոնը չէ: Ինձ տրված է հիվանդ լինել, քեզ տրված է հիվանդ երեխա ունենալ»: Սա իմաստություն է:

- Առաքելական թղթերում հաճախ ենք հանդիպում «Եթե Տերը կամենա» արտահայտությանը: Իսկ սբ Հովհաննէս առաքյալն ասում է. «Ինչ էլ խնդրենք ըստ Նրա կամքի, Նա մեզ կլսի»: Տե՛ր հայր, եթե չենք ստանում մեր խնդրածը, նշանակում է, որ Աստծու կամքը չէ՞, կամ դեռ ժամանակը չէ՞, որ ստանանք այն, ինչ խնդրում ենք:

- Հաճախ մեր խնդրվածքները բարի են, որովհետեւ իսկապէս բարին ենք խնդրում: Եվ Աստված էլ ամեն բան բարի է ստեղծել, բայց բարիքը պետք է բարությամբ տնօրինել: Առաքյալն ասում է. «Չեք ստանում, որովհետեւ չարամտորեն եք խնդրում»: Եթե մեր սրտերում չարիք կա, Աստված մեզ բարիք չի տա: Գիտի, որ այդ բարին ես ի չարս կգործադրեմ եւ պատասխանատու կլինեմ այդ բարու համար, դրա համար էլ Աստված մեզ խնայելով է, որ չի տալիս: Հաճախ մարդիկ մտածում են, որ Աստված չի լսում իրենց աղոթքը, բայց Աստված չի պատասխանում, եւ իրենց աղոթքի պատասխանը հենց Աստծու լռությունն է: Մարդիկ երբեմն երկու բարի բաների միջեւ երկմտում են, թե որը կատարեն, որ ճիշտ լինի: Այստեղ կարեւոր հանգամանք կա. ո՞րն է իր պտուղներով իսկապէս բարի: Համարձակորեն անենք այն, ինչ որ բարի ենք համարում: Եթե հաջողվեց, ուրեմն Աստված կամենում է: Ամեն բանից առաջ Աստծու կամքը խնդրենք:

Հյուրընկալեց Ամմէլա ԿԱՉՍԻՅԱՆԸ

Մայի Առեւ Կրսեր եւ նրա գրական գործունեությունը

Սկիզբը՝ էջ 7

Հրեաներին հաջողվել է վիթխարի նյութական միջոցներ կուտակել եւ զգալի վերահսկողություն հաստատել բազմաթիվ երկրների ֆինանսական ոլորտներում: Թերեւս ոչ մէկի համար գաղտնիք չէ, որ փողը շատ հարցեր է լուծում ժամանակակից աշխարհում: Այն շատ դժներ է բացում, նույնիսկ՝ գերտերությունների բարձրագույն ռազմաքաղաքական ատյանների դռները: Թերեւս սա է այն գլխավոր պատճառներից մէկը, որ հրեական ողջակիզման փաստը դեռեւս տասնամյակներ առաջ դատապարտվեց համայն մարդկության կողմից, իսկ հայոց եղեռնը՝ ավաղ ո՛չ: Թերեւս հրեաների ֆինանսական կարողությամբ կարելի է բացատրել այն, որ նրանց հաջողվեց վերստեղծել հրեական պետությունը, որն այսօրվա դրությամբ համարվում է աշխարհի առավել զարգացած եւ ռազմաքաղաքական առումով բավականաչափ ազդեցիկ երկրներից մէկը: Ցավոք, մենք չենք կարող նույն բանն ասել նորանկախ Հայաստանի մասին: Իհարկե անհեթեթություն կլինի Իսրայելի ուժն ու գործունեությունը համեմատել մեր երկրի գործության հետ: Բայց եւ այնպէս ճիշտ չէր լինի Հայաստանում տիրող ծանր իրավիճակը պատճառաբանել սոսկ հայաստանցիների մեղքով: Բանն այն է, որ Իսրայելը հովանավորվում է աշխարհի համար առաջին գերտերության՝ ԱՄՆ-ի կողմից, իսկ Հայաստանի Հանրապետությունը՝ ո՛չ: Բացի այդ՝ հրեական Սփյուռքը իսկայաճափալ ֆինանսական օժանդակություն է ցուցաբերում Իսրայելին, իսկ հայոց Սփյուռքի օգնությունը Հայաստանին ակներեւաբար մի քանի անգամ պակաս է: Նման պարագաներում Հայաստանը եւ հայ ժողովուրդը չեն կարող լուրջ դերակատարում ունենալ համաշխարհային մակարդակում եւ չեն կարող իրավիճակը փոխել՝ հօգուտ իրենց քաղաքական եւ տնտեսական շահերի: Յուրաքանչյուր ողջամիտ հայ, լինի հայաստանցի թե սփյուռքահայ, քաջ գիտակցում է վերը նշվածը: Այստեղից էլ բխում են մեր ազգի ծանրագույն բարդությունները, որոնք տեւական ժամանակ կեղեքում են նրան, խաթարում նրա կյանքի բնականոն շնչը եւ զգալիորեն սահմանափակում զարգացման հեռանկարները:

Շարունակելի
Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ԱԹ-ԹԱՆԱՀԻ

Սկիզբը՝ էջ 7

Ես ներքինին հարցրի՝ Եմիրն ինչ շնչաց իրեն: Նա պատասխանեց. «Եմիրը կարգադրեց շեյխի մոտ տանել իր քրոջ ստրկուհիներից մէկին՝ զարմանալի գեղեցկուհուն, որի հագուստը միայն հարյուր հազար դրոհեմ արժէ: Նա այդպէս արեց: Ես վեր կացա ու ասացի. «Եմիր, դա լաված չէ, այդպիսի բան չեն արել նույնիսկ Բարմեկիստները եւ ընդհանրապէս ոչ ոք»:

Նա պատասխանեց. «Այդ մասին բավ է: Իսկ դու ի՞նչ նկատի ունեիր, երբ Աբու Իսհակին ասացիր. «Նրան մի՛ ողորդիր քո շռայլությամբ այն բանից անմիջապէս հետո, երբ նրան հուսահատություն էր պատել, թե չէ կայայթի նրա լեղապարկը»: Ես պատասխանեցի. «Օ՛, մի ժամ առաջ ես Աբու Մուհամմադ աս-Սալահին եւ Աբու-լ-Հասան ալ-Մահրիբին մոտ էի, եւ ահա թե ինչ տեղի ունեցավ այնտեղ (եւ նրան պատմեցի այն ամենը, ինչ եղել է), եւ այս շեյխը նրանցից հեռացավ ոչնչով, իսկ հետո նա հայտնվեց այստեղ, եւ մեր տերը նրան թողեց բարեգործության մեջ: Եվ ես վախեցա, թե անսպասելի առատությունից կայայթեր նրա լեղապարկը»:

Նա ասաց. «Ամսիջապէս այստեղ բերեք աս-Սալահին ու ալ-Մահրիբին»: Նրանցից մէկը շուտ եկավ ու նստեց իր տեղը, բայց Եմիրը նրա հետ չխոսեց մինչեւ երկրորդի գալը: Այն ժամ նա դիմեց նրանց՝ ասելով. «Հապա ասացե՛ք ինձ, մի՞թե ես ձեզ ողորմություններով ու բարիքներով չե՞մ լիացրել: Մի՞թե ձեզ չեմ գովել, լավ ռոճիկ չեմ նշանակել եւ պատվավոր պաշտոն չեմ տվել՝ առանց ծանրաբեռնելու դժվար ծառայությամբ, եւ չե՞մ ձգտել ձեզ վճարել ամեն ինչի համար»:

Եվ նրանք սկսեցին շնորհակալություն հայտնել Եմիրին: Նա ասաց.



«Դա ինձ պետք չէ. պատասխանե՛ք այն՝ կամ ո՛չ»: Նրանք պատասխանեցին. «Այո՛, իհարկե, այդ ամենն արել ես, նույնիսկ՝ ավելին»: Նա ասաց. «Այդ պարագայում մի՞թե ես արժանի եմ, որ շնորհակալության փոխարեն եւ ի պատասխան այդ ամենի՝ դուք այն մարդկանց տարիամոզեք, որոնք հույս են կապում ինձ ու իմ առատաձեռնության հետ՝ ինձ վերագրելով անտարբերություն խնդրարկուների նկատմամբ եւ ժլատություն՝ արժանավոր մարդկանց հանդեպ: Ձեզ ի՞նչն էր խանգարում, որ այդ մարդուց վերցնեիք դիմումը: Չե՛ր, եթե ալլահին պետք չէ իմ առատաձեռնությունը խթանել, դրա մեջ կլինեի եւ ձեր բաժինը, իսկ եթե ես դժգոհեի, դա միայն ինձ կվերաբերեր, իսկ դուք մեղավոր չէիք լինի եւ օգնած կլինեիք այդ մարդուն: Իսկ այսպէս դուք նրան չէք մատուցել ծառայություն եւ չէք ծառայել ալլահին, որն իր ծառաներին հրահանգել է չկառչել սեփական բարձր դիրքին, եւ դուք չէք հիշել այն բարիքները, որ ես արել եմ ձեզ»:

Այսպէս նա շարունակեց կշտամբել նրանց ամենածանր արտահայտու-

թյուններով՝ ասելով, որ ծանրագույն հանցանք են կատարել: Նրանք ուզում էին արդարանալ, երդվում էին, որ ուզեցել են նրան ազատել երկարուկ խնդրագրի ընթերցումից՝ ձգտելով այդ մարդուն համոզել կրճատել իր դիմումը, որ հեշտ լինի կարգալը: Նրանք մտածել են, որ այդ կերպ նա վստահաբար կհասներ ցանկալիին, եւ բնավ չէին մտածում, թե նա իրենցից հեռացավ հուսախաբ ու վիատ, իսկ եթե գիտենային այդ՝ կզնային նրա ետեւից, կվերցնեին խնդրագիրը եւ կհանձնեին Եմիրին:

Բոլոր ներկաներն սկսեցին օրինել Սայֆ ադ-Դաուլէային ու երդվեցին, որ այս կշտամբանքը եւ այս մեծահոգությունը, առատաձեռնություն ուղիով ընթանալու վճռականությունը գերազանցեցին նույնիսկ նրա վերաբերմունքը կույր շեյխին, որքան էլ առաքինի լինեի. «Աշխարհում ոչ ոք,- ասում էին նրանք,- քեզանից բացի, չէր կարող այդպէս վարվել»:

Ռուսերենից թարգմ.
Արշակ ՄԱՂՅԱՆԸ

ԵՐԻՍՏՈՆՅԱ ՉԱՅԱՍՏԱՆ

Կրօնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Երիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am
web կայք՝
kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր.
4.11.2013 թ.
Տպագրանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ